



ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Բրյուսել, 18.11.2015  
Համատեղ (2015) 50 վերջնական

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ և  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ  
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Եվրոպական հարևանության քաղաքականության  
վերանայում**

{SWD(2015) 500 վերջնական}

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2004 թ-ին մեկնարկեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ)՝ օժանդակելու ԵՄ աջակցությանը և խթանելու կայունությունը, անվտանգությունը և բարեկեցությունը իր սահմանակից երկրներում: ԵՄ-ը հավատարիմ է մնում այս նպատակներին, սակայն, վերջին տարիների իրադարձությունները ապացուցել են, որ կա նոր մոտեցման, առաջնահերթությունների վերանայման և նոր գործելակերպի ներկայացման անհրաժեշտություն:

Վերջին 12 տարիների ընթացքում ԵՄ-ի սահմանակից մի շարք պետություններում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ: Արձանագրվել են որոշ դրական առաջխաղացումներ. օրենքի գերակայությունը և սոցիալական արդարությունը ապահովելու և հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով տեղական իշխանությունները բարեփոխումներ են իրականացրել, ինչի վկայությունն է Թունիայան քառյակին շնորհված Խաղաղության Նոբելյան մրցանակը: Միևնույն ժամանակ, բախումների, աճող ծայրահեղականության և ահաբեկչությունների, մարդու իրավունքների խախտումների և միջազգային իրավունքին նետված այլ մարտահրավերների, տնտեսական հեղաշրջումների արդյունքում առաջացել են փախստականների հիմնական հոսքերը: Այդ ամենն իր հետքն է թողել Հյուսիսային Աֆրիկայի և Միջին Արևելքի վրա, որպես հետևանք նպաստել է արաբական ապստամբություններին՝ ոտքի հանելով ԻԼԻՊ-ին («Իրաքի և Լևանտի իսլամական պետություն»): Արևելքում, Ռուսաստանի Դաշնության գնալով կոշտացող արտաքին քաղաքականության արդյունքում, խախտվել են Ուկրաինայի ինքնիշխանությունը, անկախությունն ու տարածքային ամբողջականությունը: Ձգձգվող հակամարտությունները շարունակում են խոչընդոտել տարածաշրջանի զարգացմանը:

Այս ընթացքում կիզակետում է հայտնվել ԵՄ և հարևան պետությունների միջև փոխադարձ կախվածության հարցը: Գնալով ավելացող փախստականների հոսքերը հասնում են Եվրոպական միության սահմաններին՝ ապահով ապագայի ակնկալիքով: Էներգետիկ ճգնաժամերն ընդգծել են, որ ԵՄ-ին անհրաժեշտ է հարևանների հետ համագործակցել էներգիայի անվտանգության ոլորտում, այդ թվում՝ էներգիայի աղբյուրների, ճանապարհների և մատակարարների տարբերակման առումով: Տեղի են ունեցել մի շարք ահաբեկչական գործողություններ, որոնք ազդեցություն են ունեցել ԵՄ-ի և հարևան երկրների վրա՝ վերջերս, նոյեմբերի 13-ին Փարիզում կատարված նողկալի ահաբեկչական հարձակումները:

ԵՀՔ-ի այս վերանայման նպատակն է առաջարկել ԵՄ և նրա հարևան պետությունների միջև առավել արդյունավետ գործընկերություններ հաստատելու ուղիներ: Այս քայլերով ԵՄ-ը հետապնդելու է իր շահերը, որոնց թվում են համընդհանուր արժեքների խթանումը: ԵՄ ներքին կայունությունը կառուցվում է ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության և բաց

տնտեսության վրա, և նոր ԵՀՔ-ը միտված է կայունացում մտցնել այս մանդատում՝ որպես հիմնական քաղաքական առաջնահերթություն:

Տարբերակված մոտեցումը և ընդլայնված փոխադարձ պատկանելիությունը կլինեն նոր ԵՀՔ հաջորդ կարևոր առանձնահատկությունները՝ ընդունելով, որ Եվրոպական միության ոչ բոլոր գործընկերներն են ձգտում համապատասխանել ԵՄ կանոններին և չափանիշներին, նաև՝ հաշվի առնելով ԵՄ հետ գործընկերության բնույթի և շրջանակի հարցերում յուրաքանչյուր երկրի ցանկությունները:

ԵՄ-ը չի կարող մենակ հաղթահարել տարածքաշրջանի բազմաթիվ մարտահրավերները և սահմանափակված է իր ազդեցության լծակների մեջ: Սակայն, նոր ԵՀՔ-ը իր դերն է խաղալու դրական առաջխաղացման համար պայմաններ ապահովելու հարցում:

Նախագահ Յունկերի առաջարկությամբ և ԵՄ անդամ պետությունների խնդրանքով նախաձեռնված հասարակական խորհրդակցությունը ավելի քան 250 առաջարկ է ստացել անդամ պետություններից, գործընկեր կառավարություններից, ԵՄ կառույցներից, միջազգային կազմակերպություններից, սոցիալական գործընկերներից, բիզնես ներկայացուցիչներից, գիտահետազոտական կենտրոններից, գիտակրթական համայնքներից, հասարակության անդամներից և այլ հատվածներից, որոնք գլխավորապես հաստատել են ԵՀՔ բովանդակության և մեթոդաբանության փոփոխության անհրաժեշտությունը:

Հասարակական խորհրդակցության ընթացքում ակնհայտ է դարձել, որ թեև ԵՄ հետ ավելի սերտ հարաբերություններ հաստատելու առաջարկը կառավարության կողմից բարեփոխումներ իրականացրած պետությունների համար բերել է այդ երկրներում որոշ փոփոխությունների, սակայն, այլ գործընկերներ ներկա գործելակերպն ու քաղաքականությունը ընկալում են որպես չափազանց ուղղորդված, որը և բավարար կերպով չի արտացոլում իրենց համապատասխան ձգտումները: Քննարկումների արդյունքում նաև հստակեցվել է հետևյալը՝ և՛ գործընկերները և՛ ԵՄ անդամ պետությունները պետք է ուժեղացնեն պատկանելիությունը. անհրաժեշտ է ավելի կենտրոնացնել համագործակցությունը, և ավելի ճկուն լինել, որպեսզի ԵՄ-ը և իր գործընկերները կարողանան արձագանքել փոփոխվող կարիքներին և հանգամանքներին:

Ժողովրդավարական, հաշվետու և լավ կառավարումը խթանելու համար անհրաժեշտ է փնտրել առավել արդյունավետ ուղիներ: Նոր ուղիներ են հարկավոր նաև արդարադատության ոլորտի բարեփոխումը խրախուսելու համար, որտեղ օրենքի գերակայության և հիմնարար իրավունքների նկատմամբ կա համատեղ հանձնառություն: Հարևանությունում հասարակությունների կայունացման համար կարևոր, վճռորոշ գործոն են համարվում բաց շուկաներն ու տնտեսական

աճը, ինկլուզիվ տնտեսական զարգացումը, մասնավորապես՝ հեռանկարները երիտասարդության համար: ԵՄ-ի և գործընկերների էներգետիկ անվտանգության և կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունները կլինեն ավելի մեծ ուշադրության կենտրոնում:

Նոր առանցք են կազմում գործընկերների հետ անվտանգության ոլորտի բարեփոխման, հակամարտությունների կանխարգելման, հակաահաբեկչական և հակաձայրահեղական քաղաքականությունների իրականացման համատեղ աշխատանքները, որոնք տարվում են մարդու իրավունքների միջազգային օրենսդրության շրջանակում: Նոյեմբերի 13-ին Փարիզում տեղի ունեցած ահաբեկչական հարձակումներից հետո այս տարածաշրջանում ավելի քան երբևէ նկատվում է մեր հարևանների հետ այս ուղղություններով ինտենսիվ համագործակցության անհրաժեշտությունը: Առաջնահերթությունների շարքում են նաև անվտանգ և օրինական տեղաշարժը, անօրինական միգրացիայի դեմ պայքարը, մարդկանց թրաֆիկինգը և մաքսանենգությունը:

Նոր ԵՀՔ-ն ավելի կապակցված և ճկուն կերպով կիրառելու է առկա գործիքներն ու ներուժը: Բացի այդ, մեր հարևան պետությունների հետ եռանդուն աշխատանքներ վերսկսելու համատեքստում, շեշտը դրվելու է ԵՀՔ-ին ԵՄ անդամ պետությունների առավել խորը ներգրավվածության վրա: Հավասարապես, նպատակը լինելու է քաղաքացիական հասարակության և սոցիալական գործընկերների հետ ավելի խորը համագործակցության ապահովումը:

Տարածաշրջանային մակարդակում ամրապնդվելու է Արևելյան գործընկերությունը՝ համաձայն 2015թ-ին տեղի ունեցած Ռիգայի գագաթնաժողովին ստանձնած հանձնառությունների: Միջերկրյածովյան միությունը կարող է ազդեցիկ դեր խաղալ՝ աջակցելով Հարավի հարևան պետությունների միջև համագործակցության ամրապնդմանը: Ներկայումս նորացված ԵՀՔ-ը միտված է ներգրավելու հարևանությունից դուրս գտնվող տարածաշրջանային այլ գործընկերների՝ անհրաժեշտության դեպքում տարածաշրջանային մարտահրավերներին արձագանքելու նպատակով:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Կայուն զարգացման 2030 օրակարգն» ու դրա «Կայուն զարգացման նպատակները» ինչպես նաև այդ օրակարգի իրականացման ուղղությամբ ԵՄ-ն կողմից տրամադրվող զգալի աջակցությունը, ապահովում են քաղաքական փոխակերման նոր շրջանակ գործընկեր երկրների հետ համագործակցության համար: Ավելին, այս վերանայումը սերտորեն համակարգվել է որպես Արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության ԵՄ Գլոբալ ռազմավարության ոլորտում ավելի ծավալուն աշխատանքների մաս:

Այս և այլ միջոցառումներով ԵՄ-ը կձգտի ամրապնդել ԵՀՔ-ն՝ որպես բոլոր գործընկերների հետ ապագայում հարաբերություններ հաստատելու շրջանակ:

## II. ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼՈՎ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՀՔ-ն ԵՄ հարևան պետությունների հետ երկարաժամկետ համագործակցություն է, սակայն, նրանում պետք է հաշվի առնվեն նաև ավելի հրատապ կարիքները: Հաջորդ 3-5 տարիների ընթացքում հարևանության բազմաթիվ հատվածներում ամենակարևոր մարտահրավերը լինելու է կայունացումը: Ապակայունացման պատճառները հաճախ գտնվում են անվտանգության տիրույթից դուրս: ԵՄ մոտեցումն է՝ համապարփակ կերպով արձագանքել ոլորտներում ապակայունացում առաջացնող աղբյուրներին: Աղքատությունը, անհավասարությունը, անարդարության գիտակցումը, կոռուպցիան, սոցիալ-տնտեսական զարգացման ցածր տեմպերը, հնարավորությունների բացակայությունը՝ հատկապես երիտասարդների համար, կարող են դառնալ անկայունության արմատներ՝ մեծացնելով խոցելիությունը ծայրահեղականության նկատմամբ: Նոր ԵՀՔ-ն վճռական ջանքեր է գործադրելու տնտեսություններին օժանդակելու և տեղական բնակչության համար հեռանկարների բարելավման ուղղությամբ: Քաղաքականությունը պետք է օգնի գործընկեր պետությունները դարձնել այնպիսի տարածքներ, որտեղ մարդիկ կցանկանան կառուցել իրենց ապագան և կօգնի պայքարել մարդկանց հսկողությունից դուրս գտնվող տեղաշարժի դեմ:

Հասարակական խորհրդակցության ընթացքում շահառուների մեծամասնությունը՝ ներառյալ բազմաթիվ գործընկեր պետությունները, խստորեն արտահայտվել են առ այն, որ ԵՄ-ն պետք է մեծացնի իր ներգրավվածությունը գործընկերների հետ անվտանգության բնագավառում: Այլ ոլորտներում վերանայված ԵՀՔ-ն առաջարկելու է անվտանգությանն առնչվող հարցերի շուրջ համագործակցելու հատուկ նախագծված մոտեցում և ակտիվորեն ապահովելու է այն, որ մեր ընդհանուր համագործակցությունն ընթանա՝ հաշվի առնելով հակամարտությունների զգայունությունը և ամբողջովին համապատասխանի միջազգային իրավունքին, այդ թվում՝ մարդու իրավունքների միջազգային օրենսդրությանը: Նոր ԵՀՔ-ը միտված է հակամատրությունների կանխարգելման ուղղությամբ գործունեության ծավալմանը՝ նախնական զգուշացումների և նաև նախնական կանխարգելիչ միջոցառումների զուգակցման միջոցով, և այդ առումով ուժեղացնելով գործընկերների կարողությունները:

Սույն համատեղ հաղորդագրության մեջ ներկայացված միջոցառումները նպատակ ունեն առաջարկել ուղիներ՝ ամրապնդելու ԵՄ գործընկերների ճկունությունը և կայունությունը արտաքին ճնշումների պայմաններում, ինչպես նաև՝ հզորացնելու իրենց կարողությունները սեփական ինքնիշխան ընտրություններն իրականացնելու համար:

### III. ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՎԵԼԻ ՀԶՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհրդակցության ընթացքում հնչեցվել են հետուն գնացող հարցեր, թե արդյո՞ք շարունակվելու է ԵՀՔ-ը, եթե այո, ապա ինչպե՞ս: Կա համաձայնություն, որ

\* Մեր գործընկերները ունեն տարբեր ձգտումներ. մեր հարաբերությունները պետք է դրանք առավել հանգամանալից արտացոլեն:

\* ԵՀՔ-ը պետք է արտացոլի ԵՄ և մեր գործընկերների շահերը:

\* Գործընկերությունը պետք է ավելի կենտրոնացված լինի ավելի քիչ առաջնահերթությունների շուրջ:

\* Անդամ պետությունները պետք է ավելի շատ ներգրավված լինեն ԵՀՔ-ում:

\*Անհրաժեշտ է ուժեղացնել գործընկերների պատկանելիությունը:

ԵՀՔ-ի վերաբերյալ խորհրդակցության ընթացքում համակարգողների մեծամասնությունը ցանկանում էր տեսնել արևելքի և հարավի հարևանների համար համընդհանուր շրջանակի որոշակի ձևաչափ: Սակայն, փոփոխության հստակ պահանջ կար. ԵՄ և իր յուրաքանչյուր հարևան գործընկերոջ հետ հարաբերություններում առաջնորդվել ավելի հստակ նախագծված և տարբերակված գործընկերություններով, որոնք կարտացոլեն տարբեր ձգտումները, կարողությունները և շահերը:

Այն դեպքում, երբ գործընկերը, համընդհանուր արժեքների հիման վրա, ցանկանում է ԵՄ հետ հաստատել ավելի խորը հարաբերություններ, աշխատանքները կծավալվեն առկա հիմքի վրա: Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան, նոր սերնդի Ասոցացման համաձայնագրի/Խորը և համապարփակ ազատ առևտրի տարածքների (ԱՀ/ԽՀԱԱՏ) միջոցով, ընտրել են ԵՄ հետ քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման ուղին, Մարոկոն առավելություններ է ձեռք բերել՝ ելնելով ԵՄ-ի հետ իր հարաբերություններում առաջադեմ կարգավիճակից, իսկ Թունիսը հաստատել է արտոնյալ գործընկերություն: ԵՄ-ը համագործակցելու է նշյալ գործընկերների հետ հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ և կողմերի համար էապես ավելացնելու է այդ համաձայնագրերի առավելությունները: Այս գործընկերությունները ամրապնդելու նպատակով՝ ԵՄ-ը պետք է ավելացնի նախարարական մակարդակում գործընկերների հետ քաղաքական երկխոսության հնարավորությունները:

ԵՄ-ն առաջարկում է 2016 թ-ին մեկնարկել գործընկերների հետ համագործակցության նոր փուլ՝ տրամադրելով խորհրդատվություն գործընկերության ապագա բնույթի և կենտրոնի վերաբերյալ: Ակնկալվում է, որ ի հայտ կգան հարաբերությունների տարբեր տեսակներ՝ կողմերին ընձեռելով պատկանելիության ավելի մեծ զգացողություն: ԵՄ-ն պատրաստ է քննարկել

գործընկերության նոր առաջնահերթությունների համատեղ սահմանման հնարավորությունը, որոնք յուրաքանչյուր հարաբերություն ավելի հստակ կերպով կկենտրոնացնեն համատեղ սահմանված ընդհանուր շահերի վրա:

«Ավելին ավելի դիմաց» խրախուսման վրա հիմնված մոտեցումն արդյունավետ էր լավ կառավարման, ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների ոլորտներում բարեփոխումների իրականացմանն օժանդակելու հարցերում, որտեղ հստակ դիտվում էր նման բարեփոխումների նկատմամբ գործընկերների հանձնառությունը: Սակայն, մոտեցումը չի եղել բավարար ուժեղ խրախուսում այն դեպքերի համար, երբ չկար քաղաքական կամք բարեփոխման նկատմամբ հանձնառության ձևավորման համար: Այս պարագայում, ԵՄ-ն գործընկերների հետ հիմնարար բարեփոխումներն իրականացնելու համար կփնտրի ավելի արդյունավետ ուղիներ, այդ թվում՝ քաղաքացիական, տնտեսական և սոցիալական հասարակության հետ համագործակցության միջոցով:

Այլևս չեն գործելու բոլոր պետությունների համաժամանակյա զեկույցների տարեկան միասնական փաթեթը: Փոխարենը՝ ԵՄ-ը մշակելու է գնահատման նոր ոճ, որը կենտրոնանալու է գործընկերների հետ հատուկ համաձայնեցված նպատակների իրականացման վրա: Այս զեկույցների ներկայացման ժամանակը հարմարացվելու է հիմք հանդիսանալու գործընկեր պետությունների հետ համապատասխան բարձրաստիճան հանդիպումների ընթացքում քաղաքական կարծիքների փոխանակման համար, ինչպիսիք են Ասոցացման/համագործակցության խորհուրդները: Այն գործընկերների համար, որոնք նախընտրում են կենտրոնանալ թվով ավելի սահմանափակ ռազմավարական առաջնահերթությունների վրա, զեկույցման շրջանակը համապատասխանեցվելու է նոր կենտրոնի արտացոլման համար: Ի լրումն երկրի համար հատուկ զեկույցման, կանոնավոր զեկույցներ են պատրաստվելու հարևանությունում զարգացումները ներկայացնելու նպատակով: Այս զեկույցները պարունակելու են Եվրոպական հարևանության գործիքի կանոնակարգով սահմանված տարրերը, այդ թվում հիմնարար ազատությունների, օրենքի գերակայության, զենդերային հավասարության և մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը:

Նոր ԵՀՔ-ը պետք է լինի է ԵՄ և անդամ պետությունների ավելի համաձայնեցված ջանքերի գործադրման կենտրոնը: ԵՄ-ն ավելի ազդեցիկ է, երբ միավորվում է համընդհանուր մոտեցմամբ և ներկայացնում է միասնական հաղորդագրություն: Այն ավելին է առաջարկում գործընկերներին, երբ ռեսուրսներն օգտագործում է ըստ ռազմավարական նշանակության և լավ համակարգված ձևով: Այսպիսով, գործընկերների հետ քննարկումներին զուգահեռ, Խորհուրդը և անդամ պետությունները մեծ դեր են ունենալու առաջնահերթությունները սահմանելու և դրանց իրականացմանն օժանդակելու հարցում: Սա ընդգրկում է համատեղ

ծրագրավորումը: Անդամ պետությունները հրավիրվելու են որոշ նախաձեռնություններում ընդգրկվելու կամ մի շարք բարեփոխումների իրականացման գործում առաջնորդ գործընկերոջ դեր ստանձնելու:

Հանձնաժողովը և Բարձր ներկայացուցիչը կանոնավոր կերպով կտեղեկացնեն Եվրոպական խորհրդարանին, Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովին և Տարածաշրջանների հանձնաժողովին նոր ԵՀՔ-ի իրագործման վերաբերյալ:

#### **IV. ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

Քննարկումների ընթացքում հաստատվել է այն տեսակետը, որ ԵՀՔ-ի միջոցով ԵՄ-ը պետք է պաշտպանի և խրախուսի համընդհանուր արժեքները: Հավասարապես հաստատվել է, որ ներկայում կիրառվող մեթոդները որոշ պետություններ համարում են ոչարդյունավետ, որոշներն էլ՝ հավասար գործընկերության խոչընդոտ:

\*ԵՄ-ն իր հաձնառում է լավ կառավարման, ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների խրախուսմանը:

\*ԵՀՔ-ը բարեփոխումների խրախուսման համար ավելի արդյունավետ ուղիներ է փնտրելու՝ յուրաքանչյուր գործընկերոջ հետ համատեղ համաձայնեցված ձևաչափերով:

\*ԵՀՔ-ը կանի ավելին՝ օժանդակելու քաղաքացիական հասարակությանը:

ԵՄ-ը հավատարիմ է մնում օրենքի գերակայության և անկախ ու արդյունավետ արդարադատության համակարգերի ապահովման հարցերում իր առաջնահերթություններին: Դրանք վճռորոշ են սոցիալական և տնտեսական կայունության համար, կարևոր են պետական կառույցների նկատմամբ վստահության ձևավորման և իրավական վստահության ապահովման հարցերում: Քաղաքական ազդեցությունից դուրս, անկախ, թափանցիկ և անաչառ իրավական համակարգը, որը կերաշխավորի արդարադատության հավասար մատչելիություն, մարդու իրավունքների պաշտպանություն, գենդերային հավասարություն և խտրականության դեմ պայքար ու օրենքի լիակատար կիրառում, շարունակելու է մնալ ԵՄ-ի և իր բոլոր գործընկերների նպատակը: Ժողովրդավարական կառավարման և տնտեսական զարգացման համար կարևոր գործոն է հաշվետու պետական կառավարումը կենտրոնական և տեղական կառավարման մակարդակներում: Հետևաբար, անհրաժեշտ է իրականացնել պետական կառավարման բարեփոխումը: Այն ենթադրում է ժողովրդավարական և անկախ կառույցների ամրապնդումը, տեղական և տարածաշրջանային կառավարման մարմինների զարգացումը, քաղաքացիական ծառայության ապաքաղաքականացումը, էլեկտրոնային կառավարության ստեղծումը և



ինստիտուցիոնալ թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացումը: ԵՄ-ը նաև աջակցելու է քաղաքականության մշակման, ծառայությունների մատուցման և պետական ֆինանսների կառավարման ոլորտներում գործընկեր պետությունների կարողությունների բարելավմանը և օժանդակելու է ազգային խորհրդարանների աշխատանքներին:

Այն բնագավառներում, որտեղ կոռուպցիոն երևույթների հավանականությունը բարձր է, օրինակ՝ պետական խոշոր գնումների, կրկին իրականացվող սեփականաշնորհումների, պետական սեփականություն հանդիսացող/վերահսկվող ընկերությունների բարեփոխման կամ նմանատիպ ոլորտներում անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ հակակոռուպցիոն միջոցառումներ, հիմնականում կանխարգելման մասով, այդ թվում՝ աջակցելով այս գործում քաղաքացիական հասարակության կարևոր դերակատարմանը:

ԵՄ-ը շարունակելու է աշխատանքները գործընկեր կառավարությունների, քաղաքացիական հասարակության և քաղաքացիների հետ մարդու իրավունքների և ժողովրդավարությանն առնչվող խնդիրների, այդ թվում՝ ընտրական գործընթացների շուրջ՝ համաձայն Եվրոպական միության մասին պայմանագրի և Մարդու իրավունքների ու ժողովրդավարության վերաբերյալ ԵՄ Գործողությունների ծրագրի: Մենք խրախուսելու և պաշտպանելու ենք մարդու բոլոր իրավունքների ունիվերսալությունն ու անտրոհելիությունը՝ թե՛ ներսում և թե՛ բոլոր տարածաշրջանների պետությունների հետ գործընկերային հարաբերություններում:

ԵՄ-ն բոլոր գործընկերների հետ սկսելու է ընդգրկուն (ինկլուզիվ) երկխոսություն մարդու իրավունքների և ժողովրդավարության խնդիրների շուրջ՝ ներառյալ այն ոլորտների մասով, որտեղ փորձը կարող է տարբեր լինել: Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը մնալու են բոլոր գործընկերների հետ քաղաքական մեր երկխոսության օրակարգում՝ համատեղ համաձայնեցված ձևաչափերով: Աջակցություն է տրամադրվելու քաղաքացիական հասարակության ֆորումներին:

Հատուկ ուշադրության է արժանանալու 2016-2020թթ. համար ԵՄ Գենդերային գործողությունների ծրագրի<sup>1</sup> իրականացումը, որի հիման վրա կծրագրվի ԵՀԳ-ը, և ԵՀՔ գործընկերներին տրամադվող աջակցությունը գենդերային հավասարության և կանանց ու աղջիկների հնարավորությունների մեծացման գործում իրենց հանձնառությունների իրագործման շուրջ՝ համաձայն 2030թ.-ի համընդհանուր Օրակարգի: Շեշտը դրվելու է կանանց ու աղջիկների ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության ապահովման և սոցիալական ու տնտեսական իրավունքների խթանման վրա: Այս հանձնառությունները կատարելու համար խրախուսվելու է կանանց ու աղջիկների հնարավորությունների մեծացումը՝ այդ թվում ապահովվելու է արդարադատության, կրթական, առողջապահական և սոցիալական այլ ծառայությունների մատչելիությունը, ձայնի իրավունքն ու քաղաքական մասնակցությունը, համակարգային մշակույթի փոփոխումը:

<sup>1</sup> Խորհրդի եզրակացություններ 13201/15, 2015թ. հոկտեմբերի 26

ԵՄ-ը աջակցելու է կառավարությունների հաշվետվողակկանության բարձրացման հարցում քաղաքացիների կարողությունների զարգացմանը և աշխատելու է բարելավել տեղական լրատվական միջոցների բազմակարծությունը, անկախությունն ու արհեստավարժությունը: Այն օգնելու է տեղական լրատվական միջոցներին ծառայել որպես հարթակ հասարակական բանավեճերի համար և գործընկեր պետություններում փոփոխության խթան հանդիսանալ: Խրախուսվելու է նաև բաց և ազատ գլոբալ համացանցը:

Ուղղակի միջոցների և այլ կազմակերպությունների ներգրավվածության միջոցով աջակցություն է տրամադրվելու ենթաազգային, ազգային և միջտարածաշրջանային քաղաքացիական հասարակությանը: «Ժողովրդավարության համար եվրոպական ֆոնդ» (European Endowment for Democracy) կազմակերպությունը կարող է կարևոր դեր խաղալ այս գործում: ԵՄ-ը պետք է աջակցի հարևանությունում քաղաքացիական հասարակության մասնագետների կարողությունների և առաջնորդության զարգացմանը՝ Քաղաքացիական հասարակության կրթաթոշակների միջոցով՝ ընդունելով երիտասարդների կարևոր դերն այս գործում:

Հարևան բազմաթիվ պետություններում էթնիկ, կրոնական և մշակութային ավանդույթները վճռորոշ դեր են խաղում հասարակության գործելաոճում: Հանրային քննարկումների ընթացքում շահառուները անդրադարձել են այդ գործոններին՝ խնդրելով ԵՄ-ին թույլատրել ընդլայնել համասեփականության շրջանակը: Այսպիսով, ԵՄ-ը պետք է ընդլայնի հանրային իրազեկման իր գործողությունները, լայն իմաստով քաղաքացիական հասարակության համապատասխան անդամների, ինչպես նաև սոցիալական գործընկերների շրջանակում:

**V. ԱՌԱՋԱՐԿԿԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

***V.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ***

Քննարկումներին արձագանքող գործընկերները արտահայտել են իրենց հետաքրքրությունը ԵՄ-ի նկատմամբ որպես տնտեսական զարգացման ու արդիականացման, ներդրումների և երիտասարդության համար աշխատանքի տարբերակներ մշակող գործընկեր: Նրանք նաև խորապես հետաքրքրված են տեղաշարժով և ԵՄ-ով ճանապարհորդելու և այնտեղ աշխատելու հնարավորություններով:

Տնտեսական և սոցիալական զարգացումը կարևոր տեղ պետք է զբաղեցնի ԵՄ կողմից իրականացվող ներդրման գործում՝ հարևանությանը կայունացնելու և գործընկերներ ձևավորելու ուղղությամբ:

Երկրի տնտեսական կայունության զարգացման հիմնաքարերն են տնտեսական կառավարման ամրապնդումը, ֆինանսաբյուջետային կայունության ուժեղացումն ու կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը տրամադրվող աջակցությունը: Դրանք նպաստում են բարելավված մրցակցությանը, ինկլուզիվ աճին և սոցիալական զարգացմանը: Հարևանությունում մակրոտնտեսական կայունությունն ու տնտեսական բարեփոխումները առաջնահերթություններ են, և ԵՄ-ը շարունակելու է օժանդակությունը, մասնավորապես՝ Մակրոֆինանսական աջակցության գործողությունների միջոցով: ԵՄ-ը պետք է նպաստի կարողությունների զարգացմանը և վերապատրաստման նոր հնարավորություններին, որպեսզի զարգացնի պետական կառավարիչների նոր սերունդ, որոնք կկարողանան իրականացնել արդյունավետ և ինկլուզիվ տնտեսական կառավարում և ստանալ կայուն սոցիալական արդյունքներ: Հիմնական այլ առաջնահերթությունների շարքում են տնտեսության արդիականացումը, նորարարության խթանումը, աշխատատեղերի ստեղծումն ու հմտությունների ձևավորումը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և տարածքային համերաշխությունը:

Աշխատանքի և աճի համար հնարավորինս լավ պայմաններ ստեղծելու համար կարելի է ավելի արդյունավետ կերպով կիրառել մի շարք նոր՝ միաժամանակ, բազմաթիվ գոյություն ունեցող գործիքներ: ԵՄ-ը պետք է զարգացնի համագործակցությունը ֆինանսական միջազգային կառույցների (ՖՄԿ) հետ, մասնավորապես՝ Ներդրումների եվրոպական բանկի (ՆԵԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի ու համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ՝ աշխատելու մասնավոր հատվածի զարգացման, ինչպես նաև այն նախաձեռնությունների ուղղությամբ, որոնք խթանում են ինկլուզիվ աճն ու աշխատանքի հնարավորությունները և բարելավում են քաղաքացիների կենսապայմանները: Բացի այդ, անհրաժեշտ է խթանել մասնավոր հատվածի հետ գործընկերությունների ստեղծման ուղղությամբ իրականացվող այնպիսի գործողություններն ու նորարար մոտեցումների կիրառումը, ինչպիսիք են դրամաշնորհների և վարկերի միակցումը: Դրանք լրացուցիչ ռեսուրսների կարգավորման և ԵՄ աջակցության ազդեցության բարձրացման կարևոր գործոններն են:

## ԱՌԵՎՏՈՒՐ

Քննարկումների արդյունքում ակնհայտ էր, որ մուտքը դեպի շուկա մնում է կարևոր հանգամանք, սակայն ավելի մեծ ճկունություն է անհրաժեշտ ցուցաբերել առևտրի համաձայնագրերի կնքման հարցում:

\* Նպատակը ստեղծել տնտեսական տարածք նրանց հետ, ովքեր ընդգրկվել են ԽՀԱԱՏ-ում:

\* Ավելի պարզ և ճկուն առևտրի համաձայնագրեր այն պետությունների համար, ովքեր չեն ընդգրկվել ԽՀԱԱՏ-ում:

Մինչ այսօր ԵՀՔ-ում բարգավաճման խթանման հիմնական գործիքն է եղել դեպի ԵՄ շուկա մուտքի հնարավորության ապահովումը: Որոշ հարևան պետություններ ընտրել են ԵՄ-ի հետ տնտեսական սերտ ինտեգրման ուղին: Արևելյան գործընկերների (Ուկրաինայի, Մոլդովայի Հանրապետության և Վրաստանի) հետ կնքվել են երեք համաձայնագրեր՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի տարածքի (ԽՀԱԱՏ) վերաբերյալ, որոնք կազմում են Ասոցացման համաձայնագրերի (ԱՀ) մաս: Հարավի հարևանությունում մեկ ԽՀԱԱՏ համաձայնաիր գտնվում է բանակցությունների փուլում (Մարոկոյի հետ), իսկ Թունիսի հետ բանակցություններն արդեն մեկնարկել են: ԵՄ-ն աջակցելու է հարավային միջերկրածովյան գործընկերների հետ ընթացիկ բանակցություններին, այդ թվում՝ փոխադարձ առաջնահերթությունների վրա հիմնված, տարբերակված, առաջադեմ և անհամաչափ մոտեցման միջոցով: ԵՄ-ն աջակցելու է հարևանների ներքին բարեփոխումների իրականացմանը, որոնք նպաստում են ԱՀ/ԽՀԱԱՏ-ի և այլ երկկողմանի համաձայնությունների իրագործմանը:

Այս համաձայնագրերի ամբողջական և արդյունավետ իրականացումը հանդիսանում է ԱՀ/ԽՀԱԱՏ գործընկերների համար հիմնական առաջնահերթություն: Դա նպաստելու է բարեփոխումների իրականացմանը և կայուն աճին: 2013թ.-ին Վիլնյուսում և 2015թ.-ին Ռիգայում տեղի ունեցած Արևելյան գործընկերության գագաթաժողովների ընթացքում սահմանվել է, որ բարեփոխումներով ուղեկցված ԱՀ/ԽՀԱԱՏ-ի իրականացումը կհանգեցնի գործընկերների համապարփակ մոտարկմանը միջազգային չափանիշներին և ԵՄ օրենսդրությանն ու չափորոշիչներին: Այն կհանգեցնի գործընկերների աստիճանական տնտեսական ինտեգրմանը ԵՄ ներքին շուկային, հետևաբար՝ տնտեսական տարածքի ստեղծմանը: Համապատասխան գործընկերների և ԵՄ միջև տնտեսական ինտեգրման այսպիսի հավակնոտ երկարաժամկետ տեսլականը ցանկալի է: Այն նաև կնպաստի ավելի մեծ տնտեսական բարգավաճման երկարաժամկետ նպատակին, որը հիմնված է Առևտրի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կանոնների և Եվրոպայում ու այլ պետություններում կատարված ինքնիշխան ընտրությունների վրա:

Սակայն, ներկայումս մի շարք գործընկեր պետությունների չեն ցանկանում ներդնել այս մոդելը: Այն պետությունների համար, որոնք չեն ցանկանում ընդգրկվել ԽՀԱԱՏ-ի վերաբերյալ բանակցություններում, մենք միտված ենք համատեղ ջանքերով սահմանելու գրավիչ և իրատեսական այլընտրանքներ՝ ինտեգրումը խթանելու և առևտրային ու ներդրումային հարաբերությունները ուժեղացնելու նպատակով: ԵՄ-ը առաջարկելու է որտեղ հնարավոր է ավելի մեծ ճկունություն, ավելի պարզ տարբերակներով դուրս մղվելով գոյություն ունեցող

առևտրի նախապատվելի կամ ոչնախապատվելի համաձայնագրերից այն պետությունների դեպքում, որոնք ի սկզբանե ընտրել են չընդգրկվել բոլոր հատվածներում:

Որպես օրինակ կարելի է բերել ԱՀ/ԽՀԱԱՏ-ում նախատեսված Համապատասխանության գնահատման և ընդունման մասին համաձայնագրեր (ՀԳԸՀ) կնքելու հնարավորությունը, ինչը թույլ է տալիս կոնկրետ հատվածներում արդյունաբերական ապրանքների ազատ տեղաշարժը: Այդ համաձայնագրերը կարող են հարմար լինել ԵՀՔ այն պետությունների համար, որոնց պայմանագրային ներկայիս հարաբերությունները ԵՄ հետ նախատեսում է մոտարկում տեխնիկական կարգավորումների, չափանիշների և համապատասխանության գնահատման ոլորտներում:

ԵՄ-ը հավատարիմ է մնում ԵՄ-ի, ԵՀՔ գործընկեր պետությունների և իրենց առևտրային գործընկերների միջև առևտրի խրախուսմանը:

#### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

<p>*Աջակցել բարեփոխումներին, որոնք հանգեցնում են բիզնեսի և ներդրումային ավելի բարենպաստ միջավայրի: *Խրախուսել աճը՝ փոքր և միջին ձեռնարկություններին աջակցություն տրամադրելու միջոցով: *Աջակցել աճին՝ գոյություն ունեցող հատվածների արդիականացման և նոր հատվածների դիվերսիֆիկացման միջոցով:</p>
--

Տնտեսական երկխոսության, քաղաքական խորհրդատվության և ֆինանսական աջակցության մոբիլիզացիայի միջոցով ԵՄ-ն օժանդակելու է գործընկերներին՝ արդիականացնելու իրենց տնտեսությունները խելացի ու կայուն աճ ապահովելու համար: Այն կխրախուսի ավելի բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորմանն ու բարեփոխումների իրականացմանը, որոնք կապահովեն ավելի մեծ ներդրումներ և կստեղծեն ավելի մեծ թվով ու որակյալ աշխատատեղեր: ԵՄ-ն կենտրոնանալու է նաև փոքր և միջին ձեռնարկություններին աջակցելու վրա:

Աշխատատեղերը հիմնականում ստեղծվում են փոքր և միջին ձեռնարկություններում (այդ հատվածն արդեն իսկ ստանում է ԽՀԱԱՏ-ով նախանշված աջակցությունը, մասնավորապես՝ բարելավելով ֆինանսների և տեղեկատվության մատչելիությունը): Անհրաժեշտ է խրախուսել և աջակցել տնտեսական ու սոցիալական զարգացումն ապահովող բարեփոխումները (կարողությունների զարգացումը, սոցիալական պաշտպանությունը, կրթությունը, ջրային և առողջապահական հատվածները):

Գիտությունը, հետազոտությունները և նորարարությունը վճռորոշ դեր են խաղում հարևանությունում որակյալ և կայուն աշխատատեղերի ստեղծման գործում,

այնպես որ պետք է նպաստել տնտեսությունների արդիականացմանը և դիվերսիֆիկացմանը՝ ԵՄ նախաձեռնություններում հարևան պետությունների բարձր մասնակցության դյուրացման միջոցով: Նման նախաձեռնություններն են Ձեռնարկությունների Եվրոպայի ցանցը, Հորիզոն 2020 և COSME ԵՄ ծրագրերը: Կարևոր է նաև կապը GÉANT-ի հետ, ինչպես նաև «Խելացի մասնագիտացում» գաղափարի խթանումը, որը մշակվել է ԵՄ տարածաշրջանային քաղաքականությունում հետազոտական և նորարարական ռազմավարությունների նախագծման համար: Խթանվելու է Ընդհանուր գիտելիքների և նորարարության տարածքի ստեղծումը ԵՄ և նրա արևելյան ու հարավային հարևանների միջև,՝ օգտագործելով գիտական ներուժը գիտելիքահեն աշխատատեղերի ստեղծման համար՝ շահագրգռելով ներդրողներին ԵՄ-ում ու հարևանությունում ներդրումներ կատարել նորարարական բիզնեսներում: ԵՄ-ը համատեղ ծրագրերի միջոցով շարունակելու է աջակցել և ինտեգրել համատեղ հետազոտական և նորարարական առաջնահերթությունները, ինչպիսիք են՝ Միջերկրյա ծովյան տարածքում հետազոտության և նորարարության համար գործընկերությունը (PRIMA) և Հորիզոն 2020-ին հարևան պետությունների ասոցիացիան:

Գյուղատնտեսությունը բազմաթիվ գործընկեր պետություններում աշխատատեղերի հիմնական աղբյուրն է, և ԵՄ-ն շարունակելու է աջակցել կայուն և ինկլյուզիվ քաղաքականություններին ու ներդրումներին՝ նպաստելու այդ հատվածի արդիականացմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, գյուղերում եկամուտ ստեղծող այլ գործողությունների դիվերսիֆիկացմանը: ԵՄ-ն աջակցելու է ռեսուրս տնտեսող տնտեսություններին՝ անդրադառնալով շրջակա միջավայրի այնպիսի մարտահրավերներին ինչպիսիք են՝ բնական ռեսուրսների դեգրադացիան և դրանց շուրջ մրցակցությունը: Նմանապես, ԵՄ-ը պետք է իր ներդրումը կատարի ծովային տնտեսությունների զարգացման գործում՝ միևնույն ժամանակ համատեղ ջանքեր գործադրելով ընդհանուր ծովերի կայուն օգտագործման համընդհանուր տեսլականի ուղղությամբ:

ԵՄ և իր հարևան պետությունների միջև թվային միջավայրի ներդաշնակեցման նպատակով հատուկ ուշադրություն պետք է դարձնել թվային տնտեսության աջակցության վրա: Դա կստեղծի աշխատատեղեր, կնպաստի աճին և նորարարությանը, մասնավորապես՝ երիտասարդների համար կրթության և աշխատանքի ապահովման հնարավորությունների մասով՝ տեղական կամ հեռահար, և կօգնի ստեղծել ցածր նախնական կապիտալ պահանջող նոր բիզնեսներ:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝  
ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎՐԱ

\*Կենտրոնանալ աշխատատեղերի և հմտությունների վրա, մասնավորապես՝ երիտասարդների մասով:

\* Ուժեղացնել աջակցությունը Էրասմուս + ծրագրին:

\* Նոր շեշտադրում մանսագիտական վերապատրաստման վրա:

\*Նոր խթան «ուղեղների շրջանառության» համար:

ԵՄ-ն կարող է բարելավել տեղական աշխատուժի աշխատանքի տեղավորման պայմանները և օգնել կենտրոնացնել ջանքերը հմտությունների և ունակությունների զարգացման, մասնավորապես՝ երիտասարդ տղաների և աղջիկների համար, հնարավորությունների ստեղծման հարցում: Աջակցությունն իրականացվելու է սկսած արտադպրոցային կրթության խրախուսման (ոչ պաշտոնական ուսուցում), տարրական ու միջնակարգ կրթություն ստանալու հնարավորությունների հեշտացման և անգրագիտության վերացման մինչև կարողությունների, արհեստների և աշխատանքահեն ուսուցման զարգացման ապահովումը: ԵՄ-ն էապես ընդլայնելու է Էրասմուս + ծրագրում հարևան գործընկերների ներգրավվածության շրջանակը, այդ թվում՝ բարձրացնելով ֆինանսավորման մակարդակը: Հատուկ շեշտ պետք է դրվի նաև Էրասմուս + ծրագրում կոնֆլիկտային տարածաշրջանների ԲՈՒՀ-երի մասնակցությունը դյուրացնելու վրա:

Կրթության և վերապատրաստման հարցում ԵՄ-ը նպաստելու է տեղաշարժին՝ այս կարևոր ոլորտում ավելի մեծ աջակցություն տրամադրելու նպատակով: ԵՄ-ը նաև օժանդակելու է եվրոպական և հարևան պետությունների պրակտիկանտների տեղաշարժին, ովքեր աշխատանքային փորձ են փնտրում արտասահմանյան երկրներում:

ԵՄ-ը խորհրդատվություն է տրանսդրելու գործընկերներին՝ երիտասարդների զբաղվածության և աշխատանքի տեղավորման վերաբերյալ խումբ ստեղծելու հարցում Եվրոպական գործընկերության շրջանակում: ԵՄ-ը, տարածաշրջանում համագործակցության համար գոյություն ունեցող ֆորումի շրջանակում, նաև խրախուսելու է Հարավային միջերկրյա ծովյան պետությունների միջև կրթության, վերապատրաստման և երիտասարդության քաղաքականությունների վերաբերյալ փոխանակումները: Այս համատեքստում ԵՄ-ը հրավիրելու է Վերապատրաստումների եվրոպական հիմնադրամին՝ ակտիվ դերակատարում ունենալու:

Գիտելիքահեն ու կայուն աշխատատեղեր զբաղեցնելու համար ԵՄ-ն աջակցելու է այն քաղաքականություններին, որոնք ուղղված են ունակությունների և աշխատաշուկայի կարիքների համատեղման, համալսարան-արդյունաբերություն համագործակցության և ուսանողների աշխատունակության զարգացման վրա, ինչպես նաև նպաստելու է հեռանկարային ծրագրերի իրականացմանը այն

անձնաց համար, որոնք սովորել կամ հմտություններ են ձեռք բերել ԵՄ-ում այնուհետև իրենց երկրներ վերադառնալու նպատակով:

#### ԳՈՐԾՆԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՃԻ ՀԱՄԱՐ

\*Ստեղծել գործընկերություններ ներդրումները խթանելու և տնտեսական արդիականացմանը աջակցելու համար:

\* Մասնավոր հատվածի ավելի մեծ ներգրավում՝ ներդրումների ապահովման և բարեփոխումներին նպաստելու նպատակով:

\* Մասնավոր հատվածի, ԵՄ, անդամ պետությունների և ֆինանսական միջազգային կառույցների նոր միավորումներ, որոնք օժանդակում են աճի ապահովմանը, աշխատատեղերի ստեղծմանը կամ երիտասարդության աջակցմանն ուղղված ռազմավարություններին:

ԵՄ-ը ստեղծելու է համընդգրկող գործընկերություններ ցանկություն հայտնող հարևանների հետ՝ նպաստելու աճին և աջակցելու զբաղվածությանն ու տնտեսական արդիականացմանը: Այն կմիավորի պետական և մասնավոր հատվածներին, ԵՄ-ին և հետաքրքրված անդամ պետություններին, ֆինանսական միջազգային կառույցներին և այլ գործընկերներին, որոնք կկարողանան նպաստել երկրի զարգացմանը՝ Խելացի մասնագիտացման ռազմավարությանը համահունչ:

Մասնավորապես, ԵՄ-ը նպաստելու է ձեռնարկատերերի և գործընկերների անմիջական համագործակցությանը հարևանությունում: Անհրաժեշտ է նախաձեռնել տնտեսական դիվանագիտության կանոնավոր առաքելություններ դեպի ԵՀՔ գործընկերներ՝ առևտուրը և ներդրումները խրախուսելու նպատակով եվրոպական բիզնեսն առավել արդյունավետ կերպով մոբիլիզացնելու հարևանությունում: Բացի այդ, նման առաքելությունների ընթացքում հարևան պետությունները ձեռք կբերեն համապատասխան գործընկերներ տնտեսական զարգացման առանձին մարտահրավերներին դիմակայելու հարցում գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակով, այդ թվում՝ իրենց հմտությունների բազան ու ձեռնարկատիրությունը ուժեղացնելու և իրենց տնտեսական գործունեությունը բազմակողմանի զարգացնելու համար:

#### ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Քննարկումների ընթացքում հաստատվել է ավելի լավ կապի հարցում աջակցությունը՝ որպես համագործակցության հիմնաքար:

\* Արևելյան գործընկերների համար լայնացնել հիմնական Տրանս եվրոպական տրանսպորտային ցանցի (TEN-T) սահմանները:

\*Մահմանել հարավում տարածաշրջանային ցանցերը, որոնք պետք է ընդգրկվեն Տրանս եվրոպական տրանսպորտային ցանցի (TEN-T) ուղենիշներում:

Տրանսպորտի կապի և հեռահաղորդակցման շուրջ համագործակցությունը նպաստում է գործընկերների տնտեսական զարգացմանը, կարող է միջոց լինել



երկխոսությունը խթանելու հարցում և դրանց միջև հանդիսանալու տարածաշրջանային համագործակցության ելակետ: Արևելքում ապահով և կայուն տրանսպորտային համակարգը, որը միացված է Տրանս եվրոպական տրանսպորտային ցանցին (TEN-T), հարևան գործընկերների և ԵՄ-ի միջև տնտեսական աճին նպաստող կարևոր գործոնն է: Հետևաբար, ԵՄ-ն Արևելյան գործընկերների համար պետք է լայնացնի Տրանս եվրոպական տրանսպորտային ցանցի (TEN-T) սահմանները և ֆինանսական միջազգային կառույցների ու այլ գործընկերների հետ համատեղ այս ընթացակարգը ցանցում նպաստի ներդրումների ներգրավմանը:

Հարավում անհրաժեշտ է ապահովել կանոնակարգող մերձեցում և ներդաշնակեցում՝ 2014-2020թթ. համար Տարածաշրջանային տրանսպորտային Գործողությունների ծրագրին համահունչ, որն ընդգրկում է ծովային տրանսպորտը, ավիացիան, երկաթուղային, ճանապարհային և քաղաքային տրանսպորտը: Միևնույն ժամանակ, ԵՄ-ը պետք է սահմանի առաջնահերթ տարածաշրջանային ենթակառուցվածքային ծրագրերը և պատրաստի ապագա Տրանս-միջերկրյածովային տրանսպորտի ցանցի ինդիկատիվ քարտեզները:

Ավիացիայի ընդհանուր տարածքի ստեղծումը խրախուսվելու է Գործող համաձայնագրերի իրականացման և նոր համաձայնագրերի բանակցման միջոցով: Դրանք մինչ այժմ կնքվել են Վրաստանի, Իսրայելի, Հորդանանի, Մոլդովայի և Մարոկոյի հետ (ավարտական տեսքի է բերվում Ուկրաինայի հետ համաձայնագիրը): ԵՄ-ը պետք է նաև զարգացնի գործընկերների կարողությունները՝ նավահանգստի բարելավված ենթակառուցվածքով և դրա հետ կապված ծառայություններով օգտվելու Ծովային մայրուղիներից:

Բացի այդ, ԵՄ-ը կանոնակարգիչների տարածաշրջանային խմբերի միջոցով ձգտելու է հեռահաղորդակցության ոլորտում փոխգործություն հաստատել մեր գործընկերների հետ Արևելքում և Հարավում, իսկ այնուհետև տիեզերքի ոլորտում՝ հետաքրքրված գործընկերների հետ:

#### ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ էներգետիկ համագործակցությունը պետք է ավելի մեծ տեղ գրավի ԵՀԲ-ում, և՛ որպես անվտանգության միջոց (էներգետիկ անկախություն), և՛ որպես կայուն էներգետիկ զարգացման ուղի:

\*Մշակություն տրամադրել էներգետիկ անկախության ապահովմանը՝ էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացման, էներգիայի արդյունաբերության ոլորտում ավելի ծավալուն համագործակցության և ածխածնի ցածր պարունակությամբ տնտեսությանն անցնելու միջոցով:

\* Հարևանությունից դուրս գտնվող գործընկերների հետ համագործակցության նոր շրջանակների ստեղծում:

Հետապնդելով կայուն էներգետիկ միության կառուցման նպատակն ու հիմքում ունենալով կլիմայական հավակնոտ քաղաքականությունը՝ ԵՄ-ն ստանձնել է հանձնառություն ուժեղացնել հարևան պետությունների հետ էներգետիկ երկխոսությունը էներգետիկ անվտանգության, էներգետիկ շուկայի բարեփոխումների և կայուն էներգիայի խրախուսման ոլորտներում: ԵՄ-ը մեծ վստահություն ունի իր հարևանության անվտանգ, ապահով ու կանխատեսելի սերնդի և էներգիայի տեղափոխման նկատմամբ և, հետևաբար, անհրաժեշտություն է տեսնում ուժեղացնել գործընկեր երկրների հետ երկխոսությունը էներգետիկ անվտանգության և կայուն արտադրության շուրջ: Հավասարապես, էներգիան կարևոր գործոն է կայուն զարգացման և գործընկերների հաստատունության հարցերում:

Մեր որոշ գործընկերներ էական կամ պոտենցիալ էական եկամուտ են ստանում իրենց էներգետիկ աղբյուրներից կամ անցումային երկրներում զբաղեցրած իրենց ունեցած դիրքից: Սակայն, բոլոր գործընկերների տնտեսական կայունությունը քիչ թե շատ կախված է իրենց էներգիայի սպառման և էներգիայի մատակարարման կամ արտադրման ծավալների միջև կայուն հաշվեկշռից: Արևելքում որոշ գործընկեր պետություններ մեծ կախում ունեն կոնկրետ մատակարարներից և, հետևաբար, մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացման միջոցով մեծապես հետաքրքրված են բարձրացնել իրենց էներգետիկ անկախությունը: ԵՄ-ը շարունակելու է աջակցել նման ջանքերին: Հարավի այլ գործընկերներ նույնպես ունեն էներգիայի աճող պահանջարկի կառավարման խնդիր:

Պանեվրոպական էներգետիկ անվտանգությունն ապահովելու համար կարևոր է ապահովել դեպի Ուկրաինա գազի հետադարձ հոսքը, ավարտի բերել «Հարավային Գազային Միջանցք» ծրագրի իրականացումը և լավագույն կերպով օգտագործել էներգիայի բացահայտված նոր աղբյուրները՝ միևնույն ժամանակ, գնահատելով և կանխարգելելով հնարավոր ռիսկերը:

Էներգիայի արդյունավետության, նորացված էներգիայի աղբյուրների, ըստ պահանջի կառավարման և կլիմայական փոփոխությունների մեղմացմանն ու ադապտացմանն ուղղված գործողություններում ընդլայնված համագործակցությունը կօգնի զարգացնել այն տնտեսությունները, որոնք ավելի արդյունավետ են, մրցունակ և կայուն՝ միևնույն ժամանակ, բարձրացնելով էներգետիկ անկախությունը և նվազեցնելով արտանետումները: Այդ նպատակները իրականացնելու համար չափազանց կարևոր է նպաստել Փարիզում ստորագրվող «Կլիմայի փոփոխության մասին» համաձայնագրի ամբողջական իրականացմանը և դրան հաջորդող զարգացումներին, որոնք, մասնավորապես, ընդգրկում են մեր գործընկերների կողմից ստանձնած հանձնառությունները: ԵՄ-ը շարունակելու է ներկայացնել լավագույն գործելակերպ և ներգրավվել համատեղ հետազոտական՝ ներառյալ հանաժողովների և փոփոխության համար սուբսիդավորման աստիճանական

վերացման, արտանետումների մոնիտորինգի, զեկուցման և ստուգման շրջանակների ներկայացման աշխատանքներում, այդ թվում՝ երկարաժամկետ կտրվածքով, արտանետումների առևտրային համակարգերի ծրագրերում, որոնք, պատրաստ լինելու դեպքում, կարող են կապվել ԵՄ արտանետումների առևտրային համակարգին:

Ներդրումների և առևտրի համար բարենպաստ հնարավորությունների բարձրացման նպատակով ԵՄ-ն ուժեղացնելու է Մոլդովային Հանրապետության, Ուկրաինայի և Վրաստանի հետ էներգետիկ ամբողջ շուկայում ինտեգրումը : ԵՄ-ն այլ գործընկերների հետ միտված է իրականացնելու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հատվածների կանոնակարգող մոտարկում: Ինչ վերաբերում է Հարավային հարևանության գործընկեր պետություններին, ԵՄ-ը, նախանշված հիմունքներով, առաջարկելու է համագործակցել էներգիայի արտադրության, բաշխման, առևտրի և արդյունավետ սպառման ուղղությամբ: Որպես առաջին քայլ, ԵՄ-ն համագործակցելու է հետաքրքրված գործընկերների և էներգիայի միջազգային գործակալության հետ՝ երկրների էներգետիկ քաղաքականությունում համապարփակ վերանայումներ իրականացնելու, այդ թվում՝ էներգետիկ ներդրումների խոչընդոտների ցուցակագրման և համապատասխան բարեփոխումների սահմանման շուրջ:

ԵՄ-ն աջակցելու է ենթատարածաշրջանային համագործակցությանը Արևելյան Միջերկրյա ծովյան երկրներում, Մագրեբյան պետություններում և Հարավային Կովկասում: Հարևանության սահմաններից դուրս, թեմատիկ նոր շրջանակ է կիրառվելու Թուրքիայի, Ղրղստանի, Թուրքմենիստանի և, հնարավոր է, Իրաքի ու Իրանի նման գործընկերների հետ հարաբերություններում: Դա կօժանդակի տրանստարածաշրջանային աշխատանքներին և այս ոլորտում կատարվող ներդրումներին ու այնպիսի հաջողված նախաձեռնությունների իրագործմանը, ինչպիսին INOGATE ծրագիրն է: Երբ պայմանները բարելավվեն, միջազգային և Եվրոպական օրենսդրության հիման վրա, ԵՄ-ն կարող է վերանայել էներգետիկ հարաբերությունները Ռուսաստանի հետ:

## V. 2. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Քննարկումները ցույց տվեցին, որ առկա է ԵՀՔ-ում անվտանգությանն առավել ամուր տեղ տալու բավականին մեծ ցանկություն, որպեսզի գործընկեր երկրները դառնան ավելի դիմացկուն այն սպառնալիքների նկատմամբ, որոնց նրանք ներկայումս ենթարկվում են: Անվտանգությանը տրվող նորովի ուշադրությունը կբացի ԵՀՔ-ի ներքո համագործակցության նոր ոլորտների լայն տիրույթ: Համագործակցությունը կարող է ներառել անվտանգության ոլորտի բարեփոխում, սահմանների պաշտպանություն, ահաբեկչության և արմատականության դեմ պայքար և ճգնաժամային կառավարում:

2015 թ. հունիսին Եվրոպական խորհուրդը վերաձևակերպեց ճգնաժամը կանխելու և կառավարելու նպատակով գործընկերներին լիազորելու և հնարավորություն տալու անհրաժեշտությունը, այդ թվում՝ ճկուն աշխարհագրական շրջանակով կարողությունների զարգացման կոնկրետ ծրագրերի միջոցով: Հաշվի առնելով անվտանգության մասով որոշակի մարտահրավերները, որոնց բախվում են մեր գործընկեր երկրները, ԵՄ-ը պետք է իր ուշադրության կենտրոնում պահի համագործակցության ընդլայնումն անվտանգության ոլորտի բարեփոխման նպատակով: Շարունակելով որպես հիմք ընդունել Անվտանգության վերաբերյալ եվրոպական օրակարգը<sup>2</sup>՝ նոր ԵՀԲ-ը որպես առաջնահերթություն կդիտարկի ահաբեկչության և արմատականության դեմ պայքարը, լուրջ և կազմակերպված սահմանային հանցագործության և կոռուպցիայի ձախողումը, քրեական խնդիրների հարցում դատական համագործակցության բարելավումը և կիբերհանցագործության դեմ պայքարը՝ լիարժեքորեն համապատասխանելով օրենքի գերակայությանը և միջազգային իրավունքին, այդ թվում՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքին:

Հարևանությունում գործընկերների հետ պրոակտիվ համատեղ աշխատանքներն անհրաժեշտ են անդրսահմանային սպառնալիքների արմատական պատճառներին անդրադառնալու և ընդհանուր սահմանների պաշտպանությանը նպաստելու նպատակով: Շահագրգիռ գործընկեր երկրների հետ միասին պետք է ընդլայնել տեղեկատվության փոխանակումը և կարողությունների զարգացումը անդրսահմանային սպառնալիքների դեմ պայքարելու նպատակով: Ավելին, նոր ԵՀԲ-ը կանդրադառնա միջանցիկ միգրացիային առնչվող անվտանգության մարտահրավերներին, ինչպիսիք են՝ միգրանտների մաքսանենգությունը, մարդկանց թրաֆիքինգը, սոցիալական համախմբվածությունը և սահմանների պաշտպանությունը/կառավարումը:

Կշարունակվեն ջանքեր գործադրվել կանանց, խաղաղության, անվտանգության հարցերով ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1325-րդ բանաձևի, դրան հաջորդող բանաձևերի իրականացման, Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության պլանավորման, իրականացման և վերանայման աշխատանքներում գենդերային կոնցեպցիայի լայնամասշտաբ ներդրման և ամրապնդման ուղղությամբ:

**Անվտանգության ոլորտի բարեփոխում.** ԵՄ-ը նախատեսում է ընդլայնել իր շփումներն այն գործընկեր երկրների իշխանությունների հետ, որոնք զբաղվում են անվտանգությանն առնչվող խնդիրներով: Շահագրգիռ գործընկեր երկրներին պետք է սատարել նրանց քաղաքացիական և ռազմական անվտանգության բարեփոխման հարցում: Նման համագործակցությունը կարող է ներառել ռազմավարական և քաղաքականության մասով խորհրդատվություն, հաստատությունների և կարողությունների զարգացման միջոցառումներ,

<sup>2</sup> Հաղորդակցություն Հանձնաժողովից դեպի Եվրոպական խորհրդարան, Խորհուրդ, Տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողով, Տարածաշրջանների կոմիտե. Անվտանգության վերաբերյալ եվրոպական օրակարգ, COM (2015) 185 վերջնական

երկխոսություններ քաղաքացիական հասարակության հետ և աջակցություն համայնքի անվտանգության ծրագրերին:

**Պայքար ահաբեկչության դեմ և արմատականության կանխարգելում.**

Ահաբեկչության և արմատականության սպառնալիքն իր ազդեցությունն է թողնում Եվրոպայի և նրա հարևան երկրների վրա: Հետևաբար, ԵՄ-ը պետք է գործընկերների հետ ընդլայնի հակաահաբեկչության ուղղությամբ իր աշխատանքները, որոնք կներառեն արմատականության կանխարգելում, հակահարված բռնի ծայրահեղականությանը, աջակցություն հակաահաբեկչության նկատմամբ քրեական արդարադատության հակազդումներին, և փողերի լվացման համապատասխան շրջանակների միջոցով ահաբեկչության ֆինանսավորման դիմակայում և ճնշում: Արմատականության կանխման գործում քաղաքացիական հասարակության և հատկապես երիտասարդական կազմակերպությունների ներգրավումը կունենա առանձնակի կարևորություն: Գործող Արմատականության մասին իրազեկման ցանցը (RAN) և վերջինիս կողմից վերջերս ստեղծված Առաջավոր փորձի կենտրոնը կհանդիսանան փորձի փոխանակման և համագործակցության կարևորագույն հարթակ: Անդրադարձն առավել ընդգրկուն խնդիրներին, ինչպիսիք են անարդյունավետ արդարադատությունը, գենդերային անհավասարությունը, ատելության խոսքը, երիտասարդության գործազրկությունը և անգրագիտությունը, նույնպես կդառնա ապաարմատականության առավել համալիր ջանքի մի մասը: Միջմշակութային երկխոսությունը, ինչպիսին Աննա Լինդ հիմնադրամի կողմից խրախուսված երկխոսությունն էր, կունենա մեծ կարևորություն:

**Կազմակերպված հանցագործության ձախողում. Կազմակերպված**

հանցագործությունը և կոռուպցիան կարող են սպառնալիք հանդիսանալ ամբողջ տարածաշրջանի կայունության համար: ԵՄ-ը պետք է մեծացնի աջակցությունը գործընկեր երկրներին՝ նրանց կողմից լուրջ և կազմակերպված միջազգային հանցագործության դեմ մղվող պայքարի, այդ թվում՝ միգրանտների մաքսանենգության և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի, և քրեական ցանցերի քայքայման ուղղությամբ՝ ֆինանսական ուսումնասիրությունների օգտագործումը որպես զուտ քրեական իրավունքի գործիքների համալրման միջոց խթանելու միջոցով: Ելնելով այդ նպատակից՝ Անվտանգության վերաբերյալ եվրոպական օրակարգը<sup>3</sup> հանձն է առել ընդլայնել «Քաղաքականության ցիկլի» աշխատանքները (լուրջ և կազմակերպված հանցագործության մասով)՝ ընդհուպ մինչև հարևան երկրներ: ԵՄ-ը պետք է նաև ուսումնասիրի գործընկեր երկրների ներգրավման հնարավորությունը գործող ֆինանսական ուսումնասիրությունների ցանցերում (ինչպիսիք են Ֆինանսական հետախուզության մարմինների ցանցերը): Ավելին, ԵՄ-ը կշարունակի աշխատել գործընկեր երկրների հետ մարդկային էակների ապօրինի թրեֆիքինգի, փոքր տրամաչափի և թեթև հրազենային զենքի ապօրինի շրջանառության, և դեղամիջոցների մասով համագործակցությանը հակազդելու

<sup>3</sup> Անվտանգության վերաբերյալ եվրոպական օրակարգ ([COM\(2015\)185 վերջնական](#))

ուղղությամբ, ինչպես նաև կաջակցի նրանց դեղամիջոցների օգտագործման ինտեգրված և հավասարակշռված ազգային քաղաքականությունների իրականացման հարցում: Անհրաժեշտության դեպքում ԵՄ-ը հետամուտ կլինի գործընկեր երկրների հետ դատական և ոստիկանական համագործակցության իրավական շրջանակի բարելավմանը և կաշխատի դրա իրականացման ուղղությամբ: Ինտերպոլի հետ պետք է ուսումնասիրել հարևան երկրներում օրենքի կիրարկման լրացուցիչ կարողության ձևավորման և ԵՄ անդամ պետությունների և Եվրոպոլի հետ տեղեկատվության փոխանակման դյուրացման ուղղությամբ աշխատանքների կարիքը: Եվրոջասոփի հետ ԵՄ-ը կնպաստի առավել ամուր ներգրավվածությանը և համագործակցությանը՝ դյուրացնելու դատական համագործակցությունը բոլոր լուրջ հանցագործությունների քննությունների մասով:

**Պայքար կիրառական ցածրագործության դեմ.** ԵՄ-ի Կիրառական ցածրագործության ռազմավարությունը<sup>4</sup> ապահովում է գործառնական կառուցվածք հարևանությունում գործընկերների հետ հետագա համատեղ աշխատանքների համար: ԵՄ-ը պետք է առաջարկի աջակցություն կիրառական ցածրագործության և կայուն տեղեկատվական ենթակառուցվածքների մասով կարողությունների զարգացման հարցում, կիրառական ցածրագործության և կիրառական հարկային ցածրագործության դեմ մղվող պայքարում (այդ թվում՝ սպառնալիքների վերլուծությունների միջոցով)՝ խթանելով օրենքի կիրարկման ոլորտում մասնագիտացումը, իրավական հարցերով վերապատրաստումը և երրորդ երկրներում համապատասխան ազգային քաղաքականությունների, ռազմավարությունների և հաստատությունների ստեղծման հարցում աջակցության տրամադրումը: ԵՄ-ը կշարունակի հարևանության շրջանակում իր գործընկերների հետ խթանել կիրառական ցածրագործության վերաբերյալ Բուդապեշտի կոնվենցիայի վավերացումը և իրականացումը: Կոնվենցիան տրամադրում է կիրառական ցածրագործության մասին ազգային օրենսդրության մշակման մոդել և հիմք՝ այս բնագավառում միջազգային համագործակցության համար:

**Քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական և միջուկային ռիսկերի թուլացում.** Օգնել գործընկերներին իրենց պատրաստվածությունը և հակազդման կարողությունը բարելավելու հարցում, այդ թվում՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Առաջավոր փորձի կենտրոնների միջոցով:

**Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականություն (ԸՄՊԳ/CSDP)** համագործակցություն և ձգձգվող կոնֆլիկտների լուծում. ԵՄ-ի անվտանգության և պաշտպանության ճարտարապետության ներքո ձևավորված կառույցները կարող են լինել լավագույն փորձի փոխանակման, ընդհանուր խնդիրների շուրջ համագործակցության և կարողությունների զարգացման ֆորում:

---

<sup>4</sup> Եվրոպական Միության կիրառական ցածրագործության ռազմավարություն. Բաց, ապահով և անվտանգ կիրառական ցածրագործություն (JOIN(2013) 1 վերջնական)

Այդպիսով, նոր լիցք կհաղորդվի ՇԱՊԲ-ին առնչվող խնդիրների մասով համագործակցությանը: Գործընկերության և համատեղ պատասխանատվության ոգի խթանելու համար, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքի համար առանձին, գործընկեր երկրների մասնակցությունը պետք է խթանել ՇԱՊԲ առաքելություններում և աշխատանքներում, ԵՄ Battlegroup ստորաբաժանումներում /մարտական խմբեր/, և համապատասխան ծրագրերին և գործակալություններին դրանց միավորումներում, ինչպիսիք են Եվրոպական պաշտպանական գործակալությունը և Անվտանգության և պաշտպանության եվրոպական քոլեջը: ԵՄ-ը հետամուտ կլինի գործընկեր երկրների հետ անվտանգության և պաշտպանության հարցերով երկխոսությունների ձևավորմանը, և համապատասխան պաշտպանության քոլեջների դասընթացներին գործընկեր երկրների պաշտոնատար անձանց և ծառայողների մասնակցության դյուրացմանը: Արտաքին կոնֆլիկտի և ճգնաժամի նկատմամբ ԵՄ համապարփակ մոտեցման համաձայն կօգտագործվեն բոլոր առկա միջոցները՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով ՇԱՊԲ-ի առաքելությունները և գործառնությունները, կամ ԵՄ հատուկ ներկայացուցիչներին՝ հարևանությունում ճգնաժամերի կառավարման հարցում աջակցելու և ձգձգվող հակամարտությունները լուծելու նպատակով:

**Ճգնաժամային կառավարում և հակազդում.** ԵՄ-ը պետք է ձևավորի գործընկերների համար վաղ նախազգուշացման, կանխման և պատրաստվածության կարողություն՝ առաջարկելով սերտ գործընկերություններ քաղաքացիական պաշտպանության և համագործակցության հարցերում ԵՄ-ի քաղաքացիական մեխանիզմի օգտագործմամբ: Բացի այդ, ԵՄ-ը հատկապես կառանձնացնի առողջապահական անվտանգության ասպեկտները՝ առողջապահական սպառնալիքներին, այդ թվում՝ վարակիչ հիվանդություններին արդյունավետորեն հակազդելու երկրի կարողությունների հզորացման միջոցով: ԵՄ արբանյակային կենտրոնի կողմից տրամադրված պատկերի մատչելիությունը նույնպես կարող է դիտվել ճգնաժամային հակազդման կարիքների լույսի ներքո, սակայն այս մասով յուրաքանչյուր դեպքի համար կայացվում է առանձին որոշում: Այս մոտեցման մեջ շատ կարևոր են ծրագրավորման ճկունությունը, և ԵՀՔ և այլ ֆինանսական գործիքների օգտագործումը: Հետևաբար, կապահովվի սերտ համակարգում CFSP/ՇԱՊԲ առավել ընդգրկուն միջոցառումների, ԵՄ անդամ պետությունների երկկողմ աշխատանքների և համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ ԵՀԳ-ի ներքո կատարվող անվտանգության աշխատանքների միջև: Պետք է հետազոտել նաև այլ գործիքների հետ համագործակցությունները՝ սկզբունքային և կարիքների վրա հիմնված հումանիտար օգնության աշխատանքի, ինչպես նաև դիմացկունության և կայունացման մասով աշխատանքի հետ կապերի հետ միասին: Համապարփակ մոտեցմանը համապատասխան՝ ԵՄ անդամ պետությունների և ԵՄ գործակալությունների ներգրավումը կարևոր կլինի անվտանգության ոլորտում աջակցության նախազգման և իրականացման հարցում:

V. 3. ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Գործընկերների մեծ հետաքրքրությունը դեպի ԵՄ առավել մեծ շարժունության նկատմամբ հաստատվել է քննարկմամբ, որը տեղի է ունեցել հարևան երկրներով հաճախակի տարանցում կատարող միգրանտների և փախստականների խոշոր հոսքի պահին: ԵՀՔ-ը կարտացույցի համագործակցության ուժեղացումն ինչպես կանոնավոր, այնպես էլ՝ անկանոն միգրացիայի մասով:

\*Ընդլայնել համագործակցությունն այն գործընկերների հետ, որոնք հարևանության շրջանակից դուրս են:

\* Ավելացնել աջակցությունը՝ ուղղված այն գործընկերներին, որոնք ընդունում և աջակցում են փախստականներին և ներքին տարհանման ենթարկված անձանց (ՆՏԱ):

\* Մեծացնել համագործակցությունն անկանոն միգրացիայի և հարկադիր տարհանման արմատական պատճառների մասով:

\* Արդյունավետ համագործակցություն վերադարձների և ետ-ընդունման (ռեադմիսիա) և կայուն վերաինտեգրման մասով:

Այդ թվում՝

\* ԵՄ-ում հմտությունների բացերի ավելի լավ որոշարկում՝ փոխշահավետ օրինական միգրացիայի դյուրացման նպատակով,

\* Ավելի լավ աջակցություն ուղղված ցիրկուլյար (շրջանաձև) միգրացիային,

\* Խրախուսել որակավորումների ճանաչումը,

\* Մկսել երկխոսություններ ակադեմիական շարժունության թեմայով:

Ինչպես ցույց է տվել փախստականների վերջին ճգնաժամը, անկանոն միգրացիայի և հարկադիր տեղահանման արմատական պատճառներին անդրադառնալը կարևոր է Հարևանությունում կայունության համար:

Միգրացիայի վերաբերյալ եվրոպական օրակարգը, Եվրոպական խորհրդի՝ հունիսի 25-26-ի և հոկտեմբերի 15-16-ի եզրակացությունները, հոկտեմբերի 8-ին կայացած բարձրաստիճան համաժողովը Արևելյան միջերկրածովյան/Արևմտյան Բալկանների ուղու վերաբերյալ, և 2015 թ. նոյեմբերի 11-12-ի միգրացիայի վերաբերյալ Վալետայի գագաթնաժողովը միաձայն հաստատեցին ԵՀՔ գործընկերների հետ խոր համագործակցության համար նոր քաղաքական խթանի առկայությունը:

Զարգացնել գործընկերություն՝ ամբողջական մոտեցման հիման վրա

Վերջին տարիների ընթացքում գործընկերների հետ միգրացիայի և շարժունության մասով համագործակցությունը խորացել է վիզաներին առնչվող մի շարք հեռահար երկխոսությունների և Շարժունության մասով բազմաթիվ գործընկերությունների միջոցով: Երկխոսություններ են ձևավորվել նաև այլ գործընկերների հետ՝ ինչպես Արևելքում, այնպես էլ Հարավում: ԵՄ-ը հանձնառել է ամրապնդել համագործակցությունը իր հարևանների հետ և վերջիններիս շրջանակից դուրս, հատկապես՝ Արևմտյան Բալկանների, Թուրքիայի, ամբողջ Միջին Արևելքի երկրների, Սահելի տարածաշրջանի և Աֆրիկյան եղջյուրի հետ:



Բարեփոխումների խթանման և մեր գործընկեր երկրների՝ առավել սերտ համագործակցությամբ աշխատելու հանձնառության ամրապնդման նպատակով կմշակվի գործընկեր երկրների միջև տարբերակում, որոնք առավել սերտորեն կաշխատեն վիզայի և շարժունության խնդիրների մասով այն գործընկերների հետ, որոնք պատրաստակամ են համատեղ աշխատել ԵՄ-ի հետ, և այդ գործընթացը կներառի նաև վիզաների ազատականացման և դյուրացման մասով երկխոսություններ գործընկերների հետ:

Արդեն իսկ ընթացքի մեջ են տարածաշրջանային շարունակական երկխոսությունները, ինչպիսիք Ռաբատի և Խարտումի գործընթացներն են Հարավում, և Բուդապեշտի և Պրահայի գործընթացները Արևելքում, ինչպես նաև Արևելյան գործընկերության միգրացիայի վերաբերյալ պանելային քննարկումները և Ներտարածաշրջանային համագործակցության և ծրագրավորման ապաստանը: Կարելի է մշակել Թեմատիկ շրջանակ՝ Հարևանության շրջանակից դուրս գտնվող երկրների հետ միգրացիայի մասով առավել արդյունավետ համագործակցությունը հնարավոր դարձնելու նպատակով:

#### Խթանել փոխշահավետ միգրացիա և շարժունություն

Անկանոն միգրացիայի դեմ պայքարի ջանքերին զուգահեռ՝ ԵՄ երկրները շարունակում են կարծել, որ պետք է խթանել շարժունությունը և մարդկանց միջև շփումները: ԵՄ-ը նախատեսում է խթանել ավելի լավ գործիքներ՝ բացահայտելու եվրոպական աշխատանքային շուկայում առկա հմտությունների բացերը և խրախուսելու ԵՄ-ում աշխատող երրորդ երկրների քաղաքացիների որակավորումների ճանաչումը:

ԵՄ-ը կամրապնդի իր իրավական դաշտը և կնպաստի վերջինիս ամբողջական և համապատասխանեցված իրականացմանը՝ հաշվի առնելով ԵՀՔ գործընկերների առանձնահատուկ վիճակը:

Հանձնաժողովը նախատեսում է 2016 թ. մարտին ներկայացնել ԵՄ կապույտ քարտի դիրեկտիվի վերանայումը՝ ԵՄ-ում երրորդ երկրների բարձր հմտություններ ունեցող քաղաքացիների մուտքը և բնակությունը բարելավելու, և հետագայում դյուրացնելու նպատակով: ԵՄ-ը պետք դյուրացնի ակադեմիական շարժունության տարածումը և բարելավի ԵՄ մուտքի և բնակության պայմանների իրավական շրջանակը, որ կիրառելի է ԵՀՔ քաղաքացիների նկատմամբ հետազոտության, ուսումնասիրությունների, աշակերտների փոխանակման, վերապատրաստման և կամավոր ծառայության մասով:

ԵՄ-ը կհամագործակցի ԵՀՔ երկրների հետ՝ հմտությունների և որակավորումների ճանաչման գործընթացի դյուրացումը խրախուսելու և այդ ուղղությամբ առաջընթաց քայլ կատարելու նպատակով:

Համագործակցելով Անդամ պետությունների հետ՝ մենք կխթանենք հմուտ աշխատուժի միգրացիայի սխեման, ներառյալ՝ ԵՄ-ի հետ հետագա միգրացիոն

համագործակցության մեջ ներգրավվելու ցանկություն հայտնած ԵՀՔ երկրների քաղաքացիների համար նախընտրելի սխեմաներ առաջարկելու հնարավորությունը:

Կատեղծվի բիզնեսների, արհմիությունների և սոցիալական գործընկերների հետ երկխոսության հարթակ՝ աշխատանքային շուկայի կարիքները և այդ առնչությամբ միգրացիայի ունեցած հնարավոր դերն ավելի լավ գնահատելու նպատակով: Երկարաժամկետ հեռանկարում բարենպաստ կլինի իրավական միգրացիայի նկատմամբ նոր մոտեցումը «Հետաքրքրության արտահայտում» համակարգերի օրինակի հիմքով, ինչը հնարավորություն է տալիս գործատուներին նախապես ընտրված թեկնածուների համախմբից վերհանել առաջնային դիմորդներին:

Նմանապես հետամուտ կլինենք սփյուռքի համայնքների հետ կապերի ձևավորման, տարածաշրջանային, այդ թվում «հարավ-հարավ» շարժունության սխեմաների ամրապնդման, շրջանաձև միգրացիայի վրա աշխատելու առավել արդյունավետ եղանակների, այդ թվում՝ 2014 թ. Սեզոնային աշխատողների դիրեկտիվի համաձայն համապատասխան ոլորտներում (օրինակ՝ գյուղատնտեսություն կամ տուրիզմ) սխեմաների վերհանման միջոցով: ԵՄ-ը պետք է խթանի նաև միգրացիայի սխեմաները փոքր և միջին ձեռնարկություններում և եվրոպական երկրների ձեռնարկատերերի համար նախատեսված վերապատրաստման ծրագրերում:

ԵՄ-ը պետք է դիտարկի նաև ԵՄ-ում ժամանակավոր բնակվող անձանց՝ իրենց ծագման երկրում որևէ բիզնեսի, մասնագիտական կամ այլ գործունեության մեջ ներգրավվելու հարցում թույլտվությունը, միաժամանակ պահպանելով նրանց հիմնական բնակությունը Անդամ պետություններում: Պետք է լուծել նաև փոխանցումների արդյունավետ ուղարկմանն առնչվող խնդիրները:

Մենք կստեղծենք նոր ստարտափ (Startback) հիմնադրամ «Ուղեղների շրջանառությունը» խթանելու նպատակով կապիտալ ապահովելու համար: Այդ Հիմնադրամը կաջակցի միգրանտներին վերադառնալ իրենց ծագման երկիր Եվրոպական միությունում իրենց կեցությունից հետո, որպեսզի նրանք իրենց ստացած հմտություններով և գիտելիքներով վերաինտեգրվեն և իրենց նպաստը բերեն ներքին տնտեսական և հասարակական զարգացման գործում:

ԵՄ-ը կշարունակի խթանել միգրացիայի մասով իրատեսական և արդար գաղափարը, և կոշտ պայքար կմղի ռասիզմի և խտրականության բոլոր ձևերի և դրսևորումների դեմ՝ խրախուսելով միջմշակութային երկխոսությունը, մշակութային բազմազանությունը և փոխըմբռնումը:

### Պաշտպանություն կարիքի մեջ գտնվող անձնաց

ԵՄ-ի ամբողջ հարևանությունը դիմակայում է մի շարք ձգձգվող ճգնաժամերի և ընդունում աշխարհի փախստականների և ներքին տեղահանված

անձնանց մոտ 40%-ին: Այսպիսով, ԵՄ-ն ունի առավել ամբողջական և համապարփակ հակազդման կարիք, որը կխթանի կարճաժամկետ հումանիտար կարիքների և երկարաժամկետ զարգացման և անվտանգության հակազդումների միջև սերտ կապերը:

ԵՄ-ը պետք է աջակցի գործընկեր երկրներին՝ իրենց ապաստանի և պաշտպանության համակարգերի զարգացման հարցում, կոնֆլիկտների արդյունքում տեղահանվածներին աջակցելու միջոցով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ուղեկցող չունեցող փախստական երեխաներին, որպեսզի ապահովվի նրանց հիմնական կարիքների երաշխավորումը, նրանց մարդու իրավունքների պաշտպանությունը, և որպեսզի նրանց սոցիալ-տնտեսական և մարդկային ներուժը չվատնվի և մատչելի լինի ընդունող հասարակությունների և համայնքների համար: Հյուսիսային Աֆրիկայում և Աֆրիկյան եղջուրի Տարածաշրջանային զարգացման և պաշտպանության նոր ծրագրերը (RDPP/SՁՊԾ-երը), որոնք կսկսեն գործել 2016 թ., ինչպես նաև Միջին Ասիայում (Հորդանան, Լիբանան և Իրաք) արդեն իսկ գործող ՏՁՊԾ-ը կունենան առանձնակի կարևորություն՝ այդ նպատակից ելնելով: Դրանց նպատակն է կարողությունների զարգացման և աջակցության միջոցով աջակցել մեծ թվով տարահանվածների ընդունող գործընկեր երկրներին հիմնականում միջազգային պաշտպանության և ապաստանի ոլորտում՝ ինչ-որ չափով մեծացնելով հարկադիր տեղահանված բնակչության և նրանց ընդունող համայնքների դիմացկունակությունը:

#### Անկանոն միգրացիայի խնդրի լուծում

ԵՄ-ը կաշխատի ԵՀՔ երկրների հետ՝ սեփական քաղաքացիների և իրենց երկրներով տարանցում կատարողների անկանոն միգրացիայի արմատական պատճառներին անդրադառնալու և դրանք մեղմելու նպատակով:

ԵՄ-ը աշխատանքներ կտանի ԵՄ-ում մնալու իրավունք չունեցող կամ այլևս չունեցող անձանց արժանապատիվ և հետևողականորեն վերադառնելու ուղղությամբ, այդ թվում՝ Հանձնաժողովի վերադարձի մասին գործողությունների ծրագրին համապատասխան ետ-ընդունման (ռեադմիսիայի) պայմանագրերի կնքման և լիարժեք իրականացման, ինչպես նաև՝ կամավոր վերադարձի և ետ-ընդունման սխեմաների միջոցով: Բացի այդ, ԵՄ-ը կաջակցի ԵՀՔ երկրներին սեփական վերադարձի քաղաքականության մշակման հարցում, ինչը նրանց թույլ կտա վերադարձնել մարդկանց իրենց ծագման երրորդ երկրներ: Պետք է շարունակել մշակել համապատասխան մեխանիզմներ՝ ապահովելու, որպեսզի իրենց ծագման երկրներ վերադարձողները կարողանան վերափնտեզրվել և իրենց նպաստը բերել տեղական տնտեսությանը և հասարակությանը: Կոմբիլիզացվեն բոլոր գործիքները վերադարձի և ետ-ընդունման մասով համագործակցությունն ընդլայնելու նպատակով, այսպիսով՝ ետ-ընդունմանը տալով առանցքային տեղ

ծագման երկրների և անկանոն միգրանտների տարանցման երկրների հետ բոլոր երկխոսություններում<sup>5</sup>:

Աշխատելով համապատասխան ԵՄ գործակալությունների հետ՝ ԵՄ-ը պետք է ավելի մեծ աջակցություն ցուցաբերի միգրանտների մաքսանենգությանը վերաբերող ազգային և տարածաշրջանային ռազմավարությունների մշակման և սահմանների միացյալ կառավարման ստանդարտների ձևավորման ջանքերին:

#### Ընդլայնել համագործակցությունը սահմանների կառավարման մասով

Հարևանությունում սահմանների կառավարման գործում գործընկերների հետ պրոակտիվ ներգրավումն անհրաժեշտ է միգրացիոն ճնշումներն ավելի լավ կառավարելու նպատակով: Շահագրգիռ գործընկեր երկրների հետ միասին՝ ԵՄ-ը կշարունակի ակտիվացնել աշխատանքները տեղեկատվության փոխանակման, վարչական կարողության, և գործառնական և տեխնիկական համագործակցության մասով: Դա կարելի է անել գործընկեր երկրների հետ վերապատրաստման, հետազոտությունների, կարողությունների զարգացման ծրագրերի և պիլոտային ծրագրերի միջոցով, հատկապես աշխատելով համապատասխան ԵՄ գործակալությունների, այդ թվում՝ FRONTEX-ի և EUROPOL-ի հետ:

## **VI. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ**

Քննարկումները մասամբ իրականացվել են գործող տարածաշրջանային համագործակցության ձևաչափերով, ինչը կշարունակվի նույն ձևով: Մակայն քննակումը հաստատեց այն լուրջ հետաքրքրությունը, որ կար հարևանների հարևանների հետ աշխատելու նոր ուղիների մշակման հարցում:

\* Նոր կապեր ԵՀՔ տարածքի սահմաններից դուրս:

\* Նոր թեմատիկ շրջանակներ՝ համատեղ մարտահրավերներին, օրինակ՝ միգրացիայի, էներգետիկայի, անվտանգության և առողջապահության ոլորտի մարտահրավերներին, լուծում տալու նպատակով:

2009 թ. ԵՄ-ը և նրա վեց Արևելյան գործընկերները ներդրեցին Արևելյան գործընկերությունը (ԱԳ)՝ որպես հիմք ընդունելով հիմնարար արժեքները (այդ թվում՝ ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը և հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ), շուկայական տնտեսությունը, կայուն զարգացումը և լավ կառավարումը: Այդ ժամանակներից ի վեր ԱԳ-ը զարգացել է՝ դառնալով փոխանակման և համագործակցության ակտիվ և բուռն հարթակ տարբեր խնդիրների շուրջ՝ սկսած առևտրից մինչև էներգետիկա, տրանսպորտից՝ մինչև կրթություն կամ շրջական միջավայր: Ռիզայում 2015 թ. կայացած Արևելյան գործընկերության /ԱԳ/ գագաթնաժողովում հաստատությունների հզորացումը և լավ կառավարումը, շարժունությունը և մարդկանց միջև շփումները, շուկայական հնարավորությունները և փոխադարձ

<sup>5</sup> ԵՄ-ի վերադարձի վերաբերյալ գործողությունների ծրագիր, 2015 թ. սեպտեմբերի 9, COM(2015)453 վերջնական

կապերը նշվեցին որպես ընդհանուր առաջնահերթություններ, որոնք կիրառործվեն գործընկերների հետ, ներառյալ՝ ԱԳ բազմակողմ շրջանակը: ԵՄ-ի և նրա գործընկերների բացառիկ իրավունքն է սեփական ցանկությունների համաձայն իրենց հարաբերությունները շարունակելու ձևերի մասին որոշումների ընդունումը:

Հարավային հարևանության երկրներում տարածաշրջանային համագործակցությունը առաջընթաց է գրանցել Միջերկրածովյան միության միջոցով: Կազմակերպությունը հաստատել է քաղաքական և տնտեսական քննարկումների համար արժեքավոր ֆորում լինելու փաստը՝ ապահովելով տարածաշրջանում ընդհանուր հետաքրքրության խնդիրների և գործող ծրագրերի մասով համագործակցության շրջանակ: Հանրային քննարկումներում շատերը խորհուրդ են տվել խորացնել այդ համագործակցությունը: Հանձնաժողովը և Գերագույն ներկայացուցիչն աշխատում են այս տարածաշրջանային համագործակցությունը հետագայում է՛լ ավելի կենսունակ դարձնելու ուղղությամբ: Սա է պատճառը, որ տարածաշրջանային համագործակցության իր ջանքերի մասով ԵՄ-ը առաջնահերթությունը կտա ՄՄ-ին՝ ըստ համապատասխանության:

Պետք է ամրապնդվեն հարաբերությունները հենց հարևանների միջև, իսկ ենթատարածաշրջանային համագործակցությունը արևելքում և հարավում՝ խթանվեն: Ըստ անհրաժեշտության, տարածաշրջանային համագործակցությունը հարևանության գործընկերների և Անդամ պետությունների միջև, թեկնածու և հնարավոր թեկնածու երկրների հետ միասին պետք է շարունակվեն ԵՄ մակրո տարածաշրջանային ռազմավարությունների և տարածքային համագործակցության ծրագրերի միջոցով՝ նրանց ներուժը լիարժեքորեն օգտագործելու նպատակով:

Այն դեպքերում, երբ կապերը և փոխկախվածություններն այլ գործընկերների հետ պահանջում են համագործակցության առավել լայն ձևաչափ, պետք է ներգրավել երրորդ երկրների: ԵՄ-ը կօգտագործի Թեմատիկ շրջանակներ՝ ամբողջ տարածաշրջանի պետական և բազմակողմ մասնակիցներին մեր Հարևանության համար խնդրո առարկա տարածաշրջանային խնդիրների մասով համագործակցություն առաջարկելու նպատակով, ներառյալ միանալը և այլ գործընկերները: Թեմատիկ շրջանակները կօգտագործվեն համատեղ քաղաքականության մոտեցումների, ծրագրավորման և ներդրման վերաբերյալ քննարկման կանոնավոր ֆորում ապահովելու նպատակով, ինչը տարածում կգտնի հարևանության շրջանակից դուրս: Դրանք կլինեն առանձին դեպքերի մասով Հարավային կամ Արևելյան հարևանության շահագրգիռ կողմերի հանդիպումները, որտեղ կհամախմբվեն շահագրգիռ Անդամ պետությունները, հարևանության երկրները և տարածաշրջանային գործընկերները՝ Միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ-ներ), միջազգային կազմակերպությունների և այլ դոնորների հետ միասին: Ըստ անհրաժեշտության կիրավիրվեն քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի

կազմակերպություններ: Թե ինչ ձևաչափ կունենան նշված Թեմատիկ շրջանակները և ինչ կողմեր կներգրավեն դրանցում, կախված կլինի խնդրից՝ հիմքում ունենալով գործող կառույցները: Միգրացիան, էներգետիկան և անվտանգությունը կլինեն հատուկ գերակայություններ:

Թուրքիան հանդիսանում է ԵՄ թեկնածու երկիր և կարևոր հարևան ինչպես հենց ԵՄ-ի, այնպես էլ՝ մի շարք գործընկեր երկրների համար: Երբ մշակվում են այնպիսի Թեմատիկ շրջանակներ, որոնք տարածվում են հարևանության շրջանակից դուրս, ԵՄ-ը պետք է շարունակի սերտորեն աշխատել Թուրքիայի հետ ընդհանուր մտահոգության խնդիրների շուրջ:

ԵՄ-ի հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ վատթարացել են Ղրիմի և Սևաստոպոլի անօրինական բռնազավթման և արևելյան Ուկրաինայի ապակայունացման արդյունքում: Կան տարածաշրջանին վերաբերող մի շարք խնդիրներ, որոնց շուրջ կառուցողական համագործակցությունը կլինի օգտակար ընդհանուր մարտահրավերների հաղթահարման և հետագա հնարավորությունների ուսումնասիրման առումով այն ժամանակ, երբ պայմանները թույլ կտան դա անել:

Համագործակցությունն այլ ֆորումներում կհամալրի նշված տարածաշրջանային համատեղ ձեռնարկումները: ԵՄ-ը պետք է մեծացնի իր շփումները ենթասահարյան Աֆրիկայում և Սահելի տարածաշրջանում, և այս համատեքստում ապահովի փոխհամաձայնեցում հետ-Կոտոնյան օրակարգի ընթացիկ աշխատանքների հետ: ԵՄ-ը պետք է նաև ներգրավի Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի բոլոր համապատասխան գործընկերներին քաղաքական երկխոսության, ներդրման և օգնության ոլորտներում: Այն կներառի երկխոսության հետագա զարգացում Արաբական պետությունների լիգայի, համագործակցություն Իսլամական համագործակցության կազմակերպության (ԻՀԿ), Օոցի համագործակցության խորհրդի (ՕՀԽ), Աֆրիկյան միության, Արաբական Մադրիբի միության հետ և աշխատանքներ Արևմտյան միջերկրածովյան ֆորումի (5+5 երկխոսություն) շրջանակում: Սնծովյա համագործակցությունը զարգացել է որպես ընդհանուր հիմնախնդիրների լուծման կարևոր ֆորում, միևնույն ժամանակ խրախուսելով քաղաքական և տնտեսական բարեփոխումը: ԵՄ-ը պետք է շարունակի խթանել տարածաշրջանային համագործակցությունը և մեծացնի համակարգումը Եվրոպայի Խորհրդի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և իր մարմինների հետ:

Սիրիայի և Իրաքի, ինչպես նաև ԻԼԻՊ/Դաեշ-ի սպառնալիքի առնչությամբ ԵՄ-ի Տարածաշրջանային ռազմավարությունը ընդհանուր գծերով ներկայացնում է այն գործողությունները, որ ԵՄ-ը և նրա Անդամ պետությունները ձեռնարկում են Սիրիայում և Իրաքում խաղաղության և անվտանգության վերականգնման համար: Ինչ վերաբերում է Իրանին, ապա, քանի որ վերջին գործարքն իրականացավ, առկա է տարածաշրջանային խնդիրների, այդ թվում՝ էներգետիկայի մասով հետագա

համագործակցության ոլորտ: Հաշվի առնելով Կենտրոնական Ասիայի ռազմավարական կարևորությունը՝ ԵՄ-ը պետք է ընդլայնի իր շփումները համապատասխան գործընկերների հետ՝ այդ տարածաշրջանի երկրների հետ ամուր, հուսալի և կայուն հարաբերություններ ձևավորելու նպատակով:

## **VII. ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ**

### ***VII.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ***

ԵՄ-ը հատկացրել է զգալի միջոցներ հարևանության երկրներում կայունացման հիմնական մարտահրավերի մասով աջակցություն տրամադրելու նպատակով՝ 2014-20.թ.թ. համար Եվրոպական հարևանության գործիքի /ԵՀԳ/ միջոցով նախատեսելով 15 մլրդ. եվրո: Հետագայում ազդեցությունն առավելագույնի հասցնելու նպատակով ԵՄ-ը կձգտի լծակավորել զգալի հավելյալ ֆինանսավորումը՝ շարունակելով ընդլայնել իր համագործակցությունը խոշոր Միջազգային ֆինանսական հաստատությունների հետ և Հարևանության ներդրումային գործիքի (ՀՆԳ) միջոցով: ԵՄ-ը կարդիականացնի և ռազմավարական առումով կհամապատասխանեցնի իր տեխնիկական աջակցության գործիքները (ԹԱԵՔՍ և ԹՎԻՆԻՆԳ)՝ համապատասխանեցված աջակցություն տրամադրելու նպատակով: ԵՄ-ը և գործընկեր երկրները կշարունակեն աշխատել միասին՝ ապահովելու, որպեսզի ԵՄ ֆինանսական աջակցությունը հասնի նախատեսված շահառուներին, այլ ոչ՝ խարդախության արդյունքում ուղղվի այլ նպատակների:

Ասոցացման օրակարգերը և գործընկերության առաջնահերթությունները կդառնան աջակցության գերակայությունների սահմանման հիմք: Երկկողմանի հատկացումները գործընկեր երկրներին կարտացոլեն ԵՀԳ-ի գերակայությունները և դրանց հավակնությունների աստիճանը, իսկ բարեփոխման հանձնառությունը և իրականացումը կշարունակեն ուղղորդել ֆինանսական միջոցների հատկացումը ԵՀԳ-ի համալիր /հովանոցային/ ծրագրի ներքո:

Չարգացումները Հարևանության երկրներում ցույց են տվել, որ անհրաժեշտ անցման և կայունության ամրապնդման համար առկա է միջազգային ֆինանսական և տնտեսական օգնության կարիքը: Եվրոպական միության ներկա գործիքակազմը նախատեսում է բազմաթիվ խնդիրներին նպատակաուղղված միջոցներ, սակայն շատ դեպքերում դրանք իրենց չափերով սահմանափակ են այն կարիքների համեմատ, որոնք վեր են հանվել կամ կարող են վերհանվել: Հետևաբար, Հանձնաժողովն առաջիկա ամիսներին կկատարի խոր գնահատում տարբերակների, այդ թվում՝ գործիքների մշակման նպատակով, որոնք կարող են ավելի լավ և առավել արդյունավետորեն բավարարել հարևանության երկրների ֆինանսական կարիքները՝ միևնույն ժամանակ սատարելով նրանց ընթացիկ անհրաժեշտ բարեփոխումների ջանքերը: Այս աշխատանքը կարող է կայանալ առկա գործիքների փորձի հիմքով, ներառյալ՝ այն գործիքները, որոնք ստեղծվել են

վերջին տարիների ընթացքում ԵՄ Անդամ պետություններին աջակցելու նպատակով:

Միրիայում և Ուկրաինայում հակազդումը կոնֆլիկտներին և Թրասթ ֆոնդերի օգտագործումը հանդիսանում են ԵՄ ֆինանսական գործիքների միջոցով արագ և ճկուն հակազդման օրինակներ: Այդուհանդերձ, պետք է անել ավելին աջակցությունն արագացնելու և դրա լավագույնս հարմարեցումն արագորեն ծավալվող քաղաքական իրավիճակներին և առաջնահերթություններին ապահովելու նպատակով:

Հանձնաժողովը և Բարձր ներկայացուցիչը կձգտեն արագացնել օգնության ցուցաբերումը կատարելագործված ընթացակարգերի միջոցով: Նրանք ԵՀԳ-ի շրջանակում կուսումնասիրեն «ճկունության բարձիկի» օգտին փաստարկները, այսինքն՝ որոշ միջոցների առանձնացում նախքան դրանց օգտագործումը չնախատեսված կարիքների հրատապ ծրագրավորման, մասնավորապես՝ կոնֆլիտային և հետ-կոնֆլիկտային կարիքների, փախստականներին աջակցելու, ճգնաժամերին և աղետներին հակազդելու և անվտանգության և կայունացման ծրագրերի նպատակով:

Կոնսուլարկվի ֆինանսական կարգավորումների փոփոխությունը, որպեսզի «ճկունության բարձիկ»-ի չօգտագործված գումարները փոխանցվեն հաջորդ տարի: ԵՄ-ը 2017 թ. կօգտագործի ԵՄ արտաքին ֆինանսական գործիքների միջնաժամկետ վերանայում վարչարարական ընթացակարգերի բարելավում նախատեսելու համար, և ըստ անհրաժեշտության, առաջարկներ կարվեն հիմնավորող իրավական ակտերը փոփոխելու նպատակով:

Դոնորների բարելավված համակարգումը էական նշանակություն ունի ոչ միայն ռեսուրսները առավելագույնի հասցնելու, այլև ԵՄ-ի ներդրումն առավել տեսանելի դարձնելու համար: Հնարավորության դեպքում տարածաշրջանում պետք է ձևավորել համատեղ ԵՄ հակազդում ԵՄ-ի բրենդի շուրջ՝ ընդլայնելով ԵՄ անդամ պետությունների հետ համատեղ ծրագրավորման օգտագործումը բոլոր ԵՄ աղբյուրներից (ներառյալ՝ ԵՄ պատվիրակությունը, ԸԱՊՔ առաքելությունները և ԵՄ հատուկ ներկայացուցիչները) ստացված վերլուծությունների մասով: Պարզեցված մոտեցումները պետք է դյուրացնեն ԵՄ անդամ պետությունների և գործակալությունների հետ կատարվող համատեղ նախագծերը:

ԵՄ-ը կամրապնդի դոնորների արդյունավետ համակարգումը այլ ԵՄ ֆինանսավորման մեխանիզմների և հիմնական միջազգային ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև՝ Աֆրիկյան միության, Արաբական պետությունների լիգայի, Օճցի համագործակցության խորհրդի հետ, և կաշխատի Միջերկրածովյան միության, Արևելյան գործընկերության և տարածաշրջանային ֆորումների միջոցով:



VII.2 ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ, ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

ԵՄ քաղաքականությունների մասին տեղեկատվության տարածումը և դրանց խթանումը կլինեն նոր ԵՀԲ-ի հիմքում: Բարելավված հանրային դիվանագիտությունը կնպաստի ԵՄ քաղաքականությունների հիմնավորման և կոնկրետ ԵՄ գործողությունների դրական ազդեցության ավելի լավ պարզաբանմանը: ԵՄ-ը պետք է ձգտի ապահովել ավելի լայնամասշտաբ լուսաբանում 2014-2020 թ.թ. հարևանությունում ԵՄ ֆինանսական միջոցների օգտագործման մասով: ԵՄ-ի լուսաբանումը պետք է դառնա իրականացնող գործընկերների հետ աշխատելու պայման:

Աջակցությունը կօգնի անկախ, հուսալի և վստահելի լրատվամիջոցների խթանման հարցում: ԵՄ-ը կարող է նաև աջակցել կառավարություններում ռազմավարական հաղորդակցության կարողությանը՝ հանրային կարծիքն ավելի լավ հասկանալու, բարեփոխման օգուտների մասին իրազեկող արշավներ պլանավորելու և դրանք համապատասխանեցնելու նպատակով:

Ինչպես համաձայնեցվել է Եվրոպական խորհրդում, ԵՄ-ը պետք է աշխատի գործընկերների հետ՝ ապատեղեկատվությունը բացահայտելու և այն ԵՄ-ին ուղղված լինելու դեպքում վճռականորեն հակազդելու համար: Պրոակտիվ ռազմավարության և տակտիկական հաղորդակցության գործիքների համապատասխան համակցությունը հնարավորություն կտա ԵՄ-ին և նրա գործընկերներին ավելի լավ մշտադիտարկել լրատվամիջոցներին և վերլուծել դրանք, ավելի լավ պատկերացում կազմել գործընկեր երկրներում ընկալումների և գաղափարների մասին և բացատրել ԵՄ-ի հետ յուրաքանչյուր երկրի համագործակցության օգուտները, որի վերջնական նպատակն է ԵՀԲ-ի ներքո աջակցության և համագործակցության վերաբերյալ դրական գաղափարի ստեղծումը:

Անդամ պետությունների ավելի մեծ ներգրավվածությունը հաղորդագրության գերակայությունների սահմանման գործում կօգնի ապահովել, որպեսզի ԵՄ-ի ձայնը լինի առավել համաձայնեցված: ԵՄ պատվիրակությունները գործընկեր երկրներում սերտորեն կաշխատեն Անդամ պետությունների ներկայացուցիչների հետ՝ հիմնական շահառուների և մասնավորապես քաղաքացիական հասարակության հետ իրենց համատեղ ձեռնարկումներում: ԵՄ-ի ներսում անհրաժեշտ են նաև իրազեկման միջոցառումները, որպեսզի մեր քաղաքացիներին բացատրվի, թե ինչու է ԵՄ-ի կայունության և անվտանգության համար կարևոր հարևանությամբ կայուն, անվտանգ և բարգավաճ երկրներ ունենալը:

ԵՄ-ը պետք է ավելի շատ զբաղվի հանրային դիվանագիտության այս օրակարգով գործընկեր երկրների կառավարությունների, քաղաքացիական հասարակության, բիզնես համայնքի, գիտական շրջանակի և այլ քաղաքացիների, մասնավորապես՝ երիտասարդության հետ, այդ թվում՝ գիտության ոլորտի դիվանագիտության միջոցով:

## ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ամբողջ հարևանության տարածքում երիտասարդների հետ համատեղ աշխատանքները կընդլայնվեն երիտասարդության համար գործընկերությունների ստեղծմամբ: Այդ գործընկերությունները կխթանեն մարդկանց միջև շփումները և բոլոր տարիքի երիտասարդների համար նախատեսված ցանցերը ԵՄ-ում և հարևանության երկրներում՝ նպատակաուղղված փոխադարձ հարգանքի, ըմբռնողության և բաց հասարակությունների խթանմանը: Այն պետք է ներառի դպրոցների և համալսարանների միջև փոխանակումների զգալի աճ, ներառյալ՝ հարևանությունում Եվրոպական դպրոցի պիլոտային ծրագրի հնարավորությունը: Erasmus-ի ուսանողների արտագնա ճանապարհորդության ֆինանսավորման մասով գործող վերին շեմի բարձրացումը կխրախուսի, որպեսզի երիտասարդ եվրոպացիներն ուսանեն գործընկեր երկրներում՝ Անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև կապերն ընդլայնելու նպատակով:

‘Friends of Europe’ /Եվրոպայի ընկերներ/ ակումբների և շրջանավարտների ցանցերի զարգացումը ԵՄ միջոցառումների մասնակիցների համար, և հնարավորության դեպքում «երիտասարդ դեսպանների» ցանցերի զարգացումը կարող են դառնալ գործիքներ նման շփումների համար, որոնք ֆորումների ստեղծմանը զուգահեռ երիտասարդ առաջնորդների և ապագա կարծիք ձևավորողների միջև փոխանակումների հնարավորություն կտան ամբողջ ԵՄ-ում և հարևանությունում:

## VIII. ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Այս Համատեղ հաղորդագրությամբ ամփոփվում է Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման վերաբերյալ պաշտոնական քննարկման գործընթացը: 2016 թ. ընթացքում մենք նախատեսում ենք գործընկեր երկրների հետ քննարկել Համատեղ հաղորդագրության մեջ ներառված առաջարկները, ինչպես նաև ԵՄ-ի կողմից ընդունված համապատասխան դիրքորոշումները՝ սույն Համատեղ հաղորդագրության մեջ ներկայացված առաջարկությունների հիման վրա մեր ապագա հարաբերությունների ձևը համատեղ որոշելու նպատակով: